


Ա. Բայրութ


# ԱՆՁՐԵՎԵ



45

ՀՅ  
ՀՅ 1935

2.



891.99  
F-22

01 JAN 2009  
EPOS SO AS

ԱԿՈՒԼ ԲԱԿՈՒՆԻՑ

19 NOV 2011

# Ա Ն Զ Ր Ե Վ Ը



ԹԵՏՐԱՍ 1935 ՅԵՐԵՎԱՆ



28.02.2013.

23491

## ՀՅՈՒՄԲԱԹԻ ԶՈՐ

Գյուղը յերեք թաղ ունի՝ Հյումբաթի ձոր, Միջին Մահլա և Գյունեյ թաղ: Յերեք թաղն ել ձորերի մեջ են, տները գետնափոր, փողոցները քարայծի ճանապարհ: Հնուց բերդ ե յեղել Հյումբաթի ձորում, ապահով թաքստոցներ, լորոնց հետքերն այժմ ել մնում են, վորակես նեղիկ անցքեր սեպածե ժայռերի լանջին:

Սրածայր ժայռեր են կողք կողքի շարված, փոքր ու մեծ, մեկը ծուռ, կողքին թեքված, փուլ յեկող դեղի նման, մյուսն ուղղաձիւ, վորպես բարակ բարդի: Զյունն ու անձրես դարերի ընթացքում քերծել են ժայռերի կողերը, լվացել և դարձրել վողորկ, հաղար ու մի ձև տվել, կերտել ու քանդակել տարրեր պատկերներ: Թվում ե թե մեկը հակա թուչուն ե թառած քարի դլխին, մյուսը գորշավուն գորտ, յերրորդը կնոջ կիսանդրի:

Մի քիչ ներքեւ, տձե ժայռերի տակ Հյումբաթն ե, բլրակի վրա՝ Միջին Մահլան, արևկող յերեսին Գյունեյ թաղը: Մութը իշնելուց ինչքա՞ն մոայլ են թվում վերի ժայռերը, ինչպես հսկումի կանգնած առասպելական հրեշներ: Հին քարանձավներից, ուր առաջ մարզն ե ապրել, մթնով յելնում ե դալը, դունչը գյուղի կողմը դարձնում, և յերկա՛ր վոռնում:

Սրբագրիչ Ս. Շահբաղյան

Հանձնված ե արտադրության 25 գիւտրվարի 1935 թ.  
Ստորագրված ե տպագրելու 13 մարտը 1935 թ.

Գևակիտ 103 հրատ. 3267 պատվեր 229 տիրաժ 4000

Պետհրատի տպարան, Երևան, Ա Գյունեյի 4,



ՀԿ 22-59

ՀԿ 22-59

Անհիշելի ժամանակներից մարդիկ ապրում են Հյումբաթի ձորում։ Նույն քարանձավում այժմ ել ապրում ե մի սերունդ, վորի հին պապերը այդ քարանձավում իրենց մերկությունը ծածկում ելին գտազնի մորթով, մարդիկ, վորոնց բրածո բաղուկների հաստ վոսկորները այժմ յերանության ու նախանձի ժպիտ են հարուցում մանրացած սերնդի աչքերում։

Հին անտառից վոչինչ չի մնացել, ավանդությունից բացի։ Այստեղ, ուր այժմ մի զույգ լզար յեղ ծանր կամն ե քաշում, կամի վրա նստած ծերունին չոդ որին միտն ե բերում պապի պատմածը կալատեղի և այն որեբի մասին, յերբ Գյունելի լանջերին խիտ անտառ եր, ձորում շամբուտներ, վորտեղ վարադ ելին վորոսում մելիքները։

Այժմ լերկ են լանջերը, արևը խանձել է ժայռերի մամուռը, անտառի հետ անհետացել են ծառերի ստվերում բանող խոտերը, կուրացել են աղբյուրները, վորոնց յերակներն անտառի խոնավությունն ելին ծծում և ջուրը ցայտում քարի ճեղքերից։

Հյումբաթի ձորում վոչ կոփ ե յեղել և վոչ կոտորած։ Տարիների հետ պառավել ե գյուղը, ուժասպան յեղել տարիքն առած ծերունու պես։ Դրա համար ել այնքան շատ են ավերակները, դուռը հողով ծածկած գոմեր, վորոնց մսուրում քանի տասնյակ տարի վոչ մի հորթ դարման չի կրծել։

Ահա յերբեմնի փողոցը... Ամեն դարնան վերից իջնող հեղեղը մի քիչ խորացրել ե հունը, տարիների ընթացքում դարձրել խորխորատ։ Կամարակապ աղբյուրի մի պատը փլվել ե, քարե խողովակից իդուր և ջուր ծլում, վորովհետեւ և վոչ մի մարդ չի կուա-

նում խողովակից ջուր իմելու։ Հեղեղը փորել ե տանհ հիմքերը, կրապատը կախվել և խորխորատի վրա։ Մի տարի, յերկու-յերեք ձյունաշատ ձմեռ, դարնան արագ հալոցք, վարար հեղեղի մի դարկ, և կիրկի խարիսուլ պատը։

Աղբյուրի կողքին հին ձիթհանքն ե։ Մելիքներն են շինել և ստիպել, վոր շրջակա գյուղերից կտավատ հավաքեն ձեթ քաշելու։ Զիթհանքի թանձր պատերն են մնացել և կլոր քարը, վոր դարձրել են գոմեշները, գիշեր ցերեկ պտույտ տվել, քարի տակ տրուել բոված կտավատը։

Հիմա ել ժայռի դլսին մնում են Մելիք-Բախտամի ամարաթի բարձր պատերը, նրա բանտը, մելիքի ախոռները, մուտքը սրբատաշ քարերից և գեղեցիկ քանդակներով։ Կա մատուռի պես մի շենք, ծաղկանկար քանդակներով, հատակը սալքար, դիմացի պատին՝ ժանգոտ յերկաթի ող։ Մատուռի պես այդ շենքում Մելիք Բախտամի ձին կերել ե ռամիկի մատներով մեկ մեկ ընտրած վոսկեհատ դարի և իրանից, քարվանով բերած քիշմիշ։

Հյումբաթի ձորով գետ ե անցնում, վորի մյուս ափին այդեստանների մեջ գունավոր կտուրներով փոքրիկ քաղաքի աներն են։ Հյումբաթի ձորում, Միջին Մաշայում և Գյունել թաղում վոչ կոփ ե յեղել և վոչ ել կոտորած։ Այն ժամանակ, յերբ քաղաքի տեղը շամբուտ եր և անտառ, ձորի բոլոր տներից ծուխ եր բարձրանում։ Յեկ յերբ առաջին մովովը հրամայեց տափարակի վրա կառուցել սպիտակ քարե զորանոցը, Հյումբաթի ձորի աստղը թեքվեց։ Գետի կամքջով գյուղից հեռացալ նա, ով վո-

կի սւներ և յերբ բարձրացան մելիքների ջրաղացի գլուխը, մի անդամ ել նայեցին հակումի կանդնած ժայռերին, քոչը վայր դրին սպիտակ զորանոցի մոտ և տափարակի վրա փորեցին նոր տների հիմքը:

Այսպես առաջացան քաղաքի տները: Յել ուղարքը, վորոնք Քիրմանի շալ բարձած, ծանր հակերի տակ տնքալով չոքում ելին Հյումբաթի ձորի հրապարակում՝ փոքրիկ կրպակների առաջ, իրենց գլուխները սպիտակ զորանոցի կողմը դարձրին և շամբուտները կոխելով մտան քաղաքի առաջին փողոցը:

Այդ որից սկսվեց և Հյումբաթի ձորի արնաքամ վները, վորովհետեւ քաղաքը նստում եր կոկորդին, տները փոխում ելին ամենալավ հողերի վրա, աղբյուրի ակունքից ամենից առաջ ջուր եր խմում քաղաքը:

Հյումբաթի ձորի հին կրպակները հիմա յել մնում են, կիսով չափ խանդարված, տատերը խարխուլ, կոռուրների վրա կանեփի փարթամ թիկիր: Նեղիկ փողոցներում, ուր աջ ու ձախ հին խանութների հետքերն են, մելիքների չուկան, հիմա անց ու դարձը քիչ ե: Լից բեղարած մի յեղ դործից դառնալիս գուցե վիզը քսի կրպակի սուր անկյունաքարին, վեզը քորի այնտեղ, ուր գունավոր շալի հոտը բուրում եր, վորպես իրանի սարզա:

Սպիտակ զորանոցն այն ապահով վայրն եր, դեպի ուր մելիքների ջրաղացի ճամփով դնում ելին կրպակների տերերը, քաղաքում մեծ խանութներ բացում, խանութների փեղկերը ներկում, վոսկետառ ցուցանակներ կախում և վոսկիները հողե կճուճների մեջ դարսելու փոխարեն պահ տալիս բանկին:

Վաղուց արդեն համարձակ մի սովորագյար բացել եր մեծ քաղաքները տանող ճանապարհը և առաջին ապրանքի հետ ուրախ լուրեր բերել Մորոզովից ու Ցինդելից: Վերջին մելիքները հագան Մոսկվայից բերած գուլպաներ և նրանց ջրակալած աչքերը տեսան, թե ինչպես կամարակապ ախոռում ձմրան գիշերին վլրնջում ե ձին, դարու մեջ փնտում Բելիք-Բախտամի քիչմիշը:

Եերդի քարերը մեկ մեկ ընկան, յերբ տափարակի վրա բարձրացան սպիտակ զորանոցի պատերը: Մելիքների բանտում սարդը վոստայն հյուսեց, ժանդը գեղին սերմեր մաղեց բանտի յերկաթ բանալիների վրա: Մելիք Բախտամի վերջին ժառանգը մեռալ հեռու մի քաղաքում, վորպես ոռոսական գնդի հրամանատար:

Հյումբաթի ձորի ժայռերը տեսան, թե ինչպես գունավոր գորդերը հանեցին քարանձավներից, շալակով տարան և գոխարենը քաղաքից ստացան նավթ, չաքար: Գորդերն ուրիշ քաղաքներ ուղարկեցին: Վոչխարները քացան, ձորում սպրողներին մնաց քաղաքում ձեռք բերել բուրդն ել, ներկն ել, և դարնանը պատրաստ գորդեր տալ բրդի տերերին:

Թվաց, թե այդ որից տորքի յերկաթներն այլ կերպ զնդացին ե. յերբ ձմրան գիշերով սպիտակահեր մի կին ձորի աղջիկներին հին նախշերն եր սովորեցնում, — ձմրան գիշերին ճրագի պատրույդի հետ մխում եր պառավի սիրտը, յերբ հիշում եր չքնաղ գորդերը, վոր տարան:

Քաղաքը մեծացավ: Հյումբաթի ձորում, Միջին Մահայում և Գյունեյ թաղում մնացին հացթուխ-

ներ, գղրաբ կանայք, լվացարաբներ, գործադորձ պառավներ, անտառից շալակով ուրիշի համար ցախ բերող մարդիկ, սրա նրա դռանը որահացի աշխատող աղջիկներ և մանուկներ, վորոնց ամենամեծ հըրձվանքը քաղաքում որնիբուն լվացք անող մոր վերադան եր, գոգնոցի ծալքում պահած համել պատոր:

Այսպես հալվեց ձորի գյուղի աստղը:

\*\*\*

Մելիքների ջաղացի գլխից մեկ մեկ կարելի յե համրել յերեք թաղի տները, ալերակները, տեսնել թե ինչպես դանդաղ քայլերով մի եշ բարձրանում և կածանով, հետեւց տերը բզում ե, կանչում և կածանի դժվար տեղը հրում եշին, ողնում բարձրանալու:

Գետի ափին կանայք ցորեն եյին լվանում աշնան արեսու մի որ, յերբ յերեք թաղն ել քարափից դիտելուց հետո, իջանք ձորը:

Խաղաղություն կար ալերակներում, կրպակներում, ձիթհանքում, ջուրն իղուր ծլլացող աղբյուրում: Ամեն տարի մի քար ե ընկել պատից, մահը թեթև ե թվացել, բողոք չի յեղել, վոչ մի թաղ չի տեսել հրդեհ, գերանները փտել են առանց մխալու, քարերը չեն շիկնել կրակից և նստել ե մամուռը: Մի կրպակի դուռ գոյ եր այնպես, ասես սովորաքյար տերը ճաշի յեր դնացել կամ գերեզմանորհնեքի:

Ման յեկանք գյուղում, տեսանք շեն տները՝ չատ ու կենտ, պառավ լլնդերի դեղնած ատամների պես: Հարեանի ալերակ տունը դարձրել են դոմ ու

մարադ, Այնքան շատ են պարապ, կիսախարիսուլ տները, դարպասը գոց, ծանր կողպէքները վրան: Թվում ե թե հանդ են գնացել, ներսից ձայն չի ըստ վում, տան առաջ դարպասի քարերի ճեղքում բուսել ե խոտը:

Մի քանի կտուրների վրա դդում կար շարած, տեղ տեղ արել տակ փուել եյին գունավոր լաթեր: Մի հին ու մեծ տան միակ պատուհանի քարին, արեկի տակ պամիդոր եյին շարել: Յեկ միակ ապացույցը, վոր կարող եր համոզել, թե այդ տանն ապրողներ կան, պատուհանի կիսակարմիր պամիդորն եր:

Թեև քաղաքը հեռու չեր, յեկած ճանապարհը մեղ ծանոթ, բայց և այնպես ուրիշ աշխարհ թվաց Հյումբաթի ձորի այդ անկյունը, վորի բնիկները կարծես ուրիշ ցեղի մարդիկ եյին: Յեկ միակ հարցը, վոր դանում եր մեր գլխի մեջ, մի «ինչու» յե այն մասին, թե ինչպես են մարդիկ ապրում այս քարերի տակ, ինչո՞ւ չեն հեռացել մի ուրիշ, հարմար տեղ: Հանկարծ յեթե ժայռերից մեկն ընկնի կամ մի քար զլորվի վերեկից:

Բակում խաղացող յերեխաները մեղ տեսան, դարմացած խաղը թողին: Յերբ մեղնից մեկը ջուր ուղեց, ջուր բերող յերեխայի անունը հարցրեց, թվաց թե նա ջուր չեր ուղում, այլ ստուգում եր, թե արդյոք այդ յերեխան մեղ նման ե խոսում:

— Վոր տան կտուրին դզում եք տեսնում, ուրեմն ենտեղ ապրում են, — ասաց բնիկներից մեկը, վոր կամրջի գլխին միացել եր մեղ: — Յերեկոյան ել կրակներով կիմանաք: Քանի ճրադ են վասում, ենքան ել տուն կա: Մնացածը արջաբներ են:

Յերեկոն հաստատեց այդ: Մութի հետ համ ու կենտ ճրագներ վառվեցին: Մութը չասեց մեղ արջաբներում կենողների մասին, բայց մանրիկ լույսերի թարթոցը կամացուկ պատմում եր, վոր Հյումբաթի ձորում քսան ճրագ կա, Միջին Մահլայի գետափի մասն և վողջ, Գյունեյ թաղի ծայրը: Մնացածն ավարակ տներ են ու մութի մեջ խառնվում են ժայռերին և չի լինում վորոշել, վո՞րն և ժայռ և վորը յերեմնի բնակալայր:

Մեկ մեկ հավաքվում եյին հեռու թաղերից, ներս մտնում ընդարձակ սրահը, տեղ բռնում փայտե նստարանների վրա: Յերբ գզերը մի անդամ ել պառյա արեց փողոցներում բարձր կանչով, չներն այս ու այն կողմից ձայն տվին ու հանդարտեցին. գզերի հետ մի քանի հոգի յեկան հեռու քարանձավներից: Սրահի կիսամութում փափախները մակադած վոչխարի պես եյին, չիրուխների կրակները՝ խոտերի մեջ լույս տվող բղեներ:

Խոսքը հողի մասին եր, հարմար մի տեղ նոր գյուղ հիմնելու մասին: Յերեկի շատ հնում, յերբ վաչկառուն ցեղերը յերկրեցերկիր եյին գաղթում, նոր աշխարհներ գրավում, այդ աշխարհի մասին հազար առասպեկտ բերնե բերան եր անցնում և վորերում անցնելու դժմար կիրճեր, սար ու ձոր, անջուր ավազուտներ:

Նոր գյուղի խնդիրը Հյումբաթի ձորի համար յերջանիկ աշխարհի առասպեկտի պես եր, նրանք իրենց հանդերի անուններն եյին տալիս, մեկի ջուրը գումար, մյուսի խոտը:

— Մենակ ես ձորից դուրս գանք...

Փափախների տակ պապղում եյին աչքերը, վարպետն չի բուխի կրակներ, յերբ մեկը ծանոթ բանտի նկարագիրն եր անում և ուրվագծում վաղիս գյուղը, լայն ճանապարհը և ճանապարհի նման աղատ կյանքը:

Յերբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քիւարկության դրեց նոր գյուղատեղը փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի յետև մի պահ չերեացին փափախները, թվաց թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր և պարզել գեղի սեացած ոճորքը:

Ճրագը թարթում եր, լույսի հետ և տաքություն տալիս: Ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն եր սփոռել սրահում: Յեվ ուրախ աղմուկով դուրս յեկան: Այսպես եր սկսվում իր չուն վաշկատուն ցեղը անցած դարերում:

Անդուխքի գլխին Գյունեյ թաղից մի ալեւր մոտեցավ մեղ:

— Մի վոսս գերեզմանումն ե. յես կարող ե յտեսնեմ են նոր տեղը, բայց տարեք... Գնացե՛ք Հյումբաթի ձորի դժուխքից:

Սանդուղքի վեխից մի պահ նայեցի, թե ինչպես մահակով քարերը չոչափելով ծերունին կորավ մութի մեջ: Լսելի յեր, թե ինչպես նա մահակի ծայրով զարկում եր քարերին, ճանապարհը փնտում:

Կրակները չեյին յերեռում: Մութի մեջ հաղիվ եյին նշմարվում գյուղի գլխի ժարուերը, մելիքների ամարաթի պատերը: Ժայռերը թանձր ստուեր եյին կախել գյուղի վրա, ամարաթը թվում եր վորպես կանգուն դլյակ, վորի խավար խուցերում գուցի ըրջում և Մելիք-Բախտամը, վորպես ուրվական...

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Տնտեսությունը պլանով վարելու համար, ձրման մի գիշեր Վասիլը մտքում դրեց որագրի պես միքան պահել, նշանակել յեղան վարն ու կերը, ի՞նչքան հաց են ուտում ամեն ամիս, քա՞նի խուրծ խոտ և հարկավոր իր յերկու կովին, յե՞րբ ե ծնելու կովը, քանի՞ ձու յե քաղաք տանում ծախելու և այլն:

Աղաղա հեռանկարների մասին մի քիչ մտածելուց հետո Վասիլը շուռ յեկավ կողքին և դլուխը բարձի վրա հարմար տեղավորելով, քնեց այն խոր ու հանդիսա քնով, վորպիսին յերկի ունենում ե նավի կապիտանը փոթորկից հետո նավի սարք ու կարգը դիտելով, մինչեւ խաղաղ նավահանդիսար:

Վասիլի անտեսության միակ ճեղքը հարեանի պարտքն եր և այդ ճեղքից հաղար ու մի անախորժություններ ներս մտնում, վրդովում նավի կանոնավոր ընթացքը, ճոճում, ուղղությունը կորցնում, ահ ու սարսափ տարածում նավաստիների՝ մոր կնոջ, քրոջ ու յերեխաների մեջ:

Այդ գիշեր, յերբ ձմբան քամին վոռնում եր այնպես, ինչպես հաղար պարտատեր միաբերան կվոնային, Վասիլի զվիսում ծաղած միտքը՝ որագիր և հաշիվ պահելու մասին, անշուշտ ներքին և անքակտելի կապ ուներ պարտքի անխուսափելի հատուցման հետ: Ամենայն հավանականությամբ բար-

ձի վրա գլուխը հարմար տեղավորելուց առաջ, նրա դիմում ծագել ե և յերկրորդ միտքը՝ նավի ճեղքը Տիգրանուհով ծածկելու մասին:

Նրա որագիրը հին, թերթերի ծայրերը մաշած յերազահանի լուսանցքների վրա յե գրած և կաղմի կողին: Վասիլն ամեն որ չի դրել: Յերեսում ե, վոր գարնան սկզբին, յերբ առավոտից մինչև իրիկուն քրտնել են ինքը, գոմեշը և տան անդամները, ժամանակ չի յեղել ամեն որ գրելու: Մատենագիրը բավականացել ե միայն շաբաթվա կարեոր գեղաքերն արձանագրելով լուսանցքի վրա, մինչև քունը հաղթեր: Իսկ գորնան սկզբին միշտ ել քունն ե հաղթել և յերկու յերեք բառ գրելուց հետո գիրչն ընկել է ճեռքից, նույնիսկ միտքը կիսատ թողնելով:

Վասիլի որագիրը սկսվում ե տան անդամների ցուցակով, վոր ըստ յերեսույթին կաղմված ե հաջորդ առավոտյան, ուտելուց հետո, քանի վոր թերթի անկյունում Վասիլի բութ մատի հետքը կա, թաթախված ինչ վոր պղտոր և մի քիչ ել յուղոտ հեղուկի մեջ:

Բատ այդ ցուցակի նավի վրա ութ մարդ եր՝ ինքը, մայրը, կինը, չորս յերեխան և Տիգրանուհին: Անունների դիմաց տան անդամների տարիքն ե և այն կապը, վոր ունի տան անդամը Վասիլի հետ: Այսպես՝ «Տիգրանուհի», քույր, 16 տարեկան»: Վասիլի կենդանի ինվենտարը յերկու կով ե, մի գոմեշ, ութ հավ: Կովերն ու գոմեշը անուններով են, առանց տարիքի և տան անդամների ցուցակին անմիջապես կցած: «Տիգրանուհի», քույր, 16 տարեկան» և հետո «Ծաղիկ կով»:

Վորովչետե Վասիլը գեղադիտական նպատակի հետամուտ չի յեղել, որագրից չի կարելի վորոշել, թե ինչպես եյին Տիգրանուհու մազերը՝ ու թե չեկ, աչքերը կապույտ եյին, թե թուխ։ Միակ հիշողությունը նրա արտաքինի մասին գրված է մայիսի 6-ին։ «Տիգրանուհու համար առա դեյրա»։ Դիմացը նշանակված է գինը, վորից յերեսում ե, վոր կտորի հասարակ չիթ է յեղել։

Կա մի ուրիշ հիշատակություն, առանց ամսաթվի։ «Տիգրանուհու համար չուստը չառա»։ Յերազահանի այդ յերեսին տպված է հետեւյալը։ «Լոշիկ կամ տրեխ տեսանելն մեծ կորուստ է, յերազն յոթն որն կատարի»։ Կարելի յե յենթադրել Տիգրանուհու տիրությունը չուստեր չունենալու համար և թե ինչպիսի յերագ ե թվացել մի զույգ չուստը։ Մտույգ ե, վոր Տիգրանուհին բորիկ վոտքերով ե գնացել քաղհանի, ինչպես նշանակել է Վասիլը մի քանի որ հետո։

Վասիլը շատ որեր մանրամասն ե գրել։ Որինակ հունիս 11-ին նշանակել ե. «մայրս գնացել եր իր յեղբոր վորդու տունը զոնաղ 4 որով։ Վարսենիկը (կինս) զբաղվուծ եր տանը մանր դործերնիվ։ Կովը տվալ 12 գրվանքա կաթ, Ծաղկիլը վոչ։ Տիգրանուհին գնացել եր ջաղաց ալյուր աղալու, բայց նորաթ ըլինելու պատճառով յեկավ տուն։ Զեր աշխատում գոմելը, հանդստացնելու համար գնացել եր դաշտն արածելու։ Յեկավ անձրւ։ Բաղալի տղան տվեց իր պարտքը—կես կոտ ցորեն։ Առա մի բահի կոթ։ Յեկս մի շաբաթում հալերը 12 ձու ածեցին, վորից 5-ր ծախեցինք, ընդամենը 10 կոպեկ»։

Ամբողջ որագրի մեջ հունիս 11-ը նշանավոր է յերկարապատում և մանրամասն լինելով։ Խոսելով ապահովագրման թերթիկի մասին, վոր յերեկի նույն որն ե ստացել, Վասիլն ավելորդ չի համարել հետեւյալ խորհրդակցությունն անել. «կառավարության կողմից յեկավ շրջեկ և խոսեց ապահովագրման մասին նաև բուրժուական կողմանից։ Ժողովուրդը բուրժը հասկացան միաբերան, կեցցեք դուք միություն»։

Անցյալ տարվա որացուցյով հունիսի 11-ին կիրակի եր։ Ըստ յերեսույթին այդ կիրակին Վասիլն անմահացրել ե գինով և յերեկոյան դեմ փիլիսոփայիլ «միության» և «բուրժուական կողմանից»։ Միքանի որ հետո, հունիսի 16-ին Վասիլը գրել ե. «Տիգրանուհին անվորոշ աշխատանք եր անում։ Գաղթականը տարավ կես կոտ ցորեն գիմաց»։

Այդ ամսին Վասիլն առաջին անգամ հիշատակում ե պարտքը։ Գրելով, վոր թրթուոն ուսում ե կաղամթի տերեւները, Վասիլն ավելացնում ե. «պարտքից դուրս յեկանք տասը մանեթ Տիգրանուհու աշխատանքի դիմաց, ևս տվի 12 մանեթ փողով»։

Տիգրանուհու մասին տեղեկությունները հունին կցկառւը են։ Յերեւում ե, վոր ամբողջ ամսվա ընթացքում աղջիկն աշխատել ե յեղբոր պարտքի դիմաց։ «Տիգրանուհին քաղհան եր անում հարեանի բոստանը պարտքի դիմաց»։ «Առա յեղան մի հատ։ Տիգրանուհին լորի յեր քաղում պարտքի կողմից։ Առա ծամոն վերքի համար։ Փոր եմ արել, հետո գնացի ցախ բերելու; Ծաղկիլը ցամաքեց անհայտ պատճառից»։

Հուլիսի վերջին նա դրել ե. «Տիգրանուհին դնաց վերին արտը խուրձի, պարտքի դիմաց: Յեկտիլի ճեռաց Յ մանեթ»: Թե ի՞նչ խուրձ ե վերին արտում և ի՞նչ աշխատանք ե արել Տիգրանուհին այդ արտում, — պարզ չերեսում: Նույն որը Վասիլը գրել ե. «Վարսենիկը հիվանդ ե. Տիգրանուհին յեկալ վոտքին վերք: Առա ծամոն վերքի համար»:

Վարսենիկի հիվանդությունը վերջացել ե հաջորդ որվա լուսաբացին: Վասիլը գրել ե. «Ճնվեց ինձ ևս մի աղջիկ»: Յեկ ուրիշ վոչինչ: Այդ ամբողջ շաբաթը նա մի նախադասություն և նշանակել. «պարտքից մնաց քառասուն»:

Աղջիկն լսու յերեսութին մի շաբաթից ավել չի ապրել: «Գիշերս մահացավ նորածինը, առանց անուն դնելու», — գրել ե Վասիլը: Հին յերաղահանը նույն յերեսի վրա, Վասիլի գրածից մի քիչ ներքե ասում ե. «յերազն բարի յե և կատարվի ավուրն», իսկ Վասիլը դիմացը նշանակել ե. «առա կաղին յերեխաների համար 16 կոպեկ, ևս նամի՞թ, դրվանքում մի կոպեկ պակաս, դրմարով 30 կոպեկ»:

Տիգրանուհու մասին հետադայում յեղած հիշումները միշտ ել «պարտքի դիմաց» ևն կամ «պարտքի կողմանից»: Նա բւրդ է լվանում, կալ ե կալում, լորի յե քաղում բռստանում: Ինչ ինչ նկատառումով Վասիլը կարեոր ե համարել ոդոստոս 21-ին նշանակել, վոր այդ որը Տիգրանուհին չի աշխատել, «վոտքը մտել ե փուշ»:

Ոգոստոսը Վասիլի տարեղբության մեջ նշանավոր ե դրամական հաշիվներով: Համարյա ամեն յերեսի գրել ե փոքրիկ հաշիվներ՝ որվա ծախս.

«Հնձվորին մի որ ներքի արտում մի մանեթ 60 կոպեկ», «Մանուչարից սոսա գերանդի, պարտք մնացի 60 կոպեկ»: «Ջրլորներին մի փութ ցորեն»:

Վասիլի մատյանում Տիգրանուհու չուստերի մասին մի անդամ ել հիշատակված ե ոգոստոսի վերջին: Թեև Վասիլը որպես շարունակել ե մինչեւ տարվա վերջը, սակայն շատ քիչ են հիշատակումներ Տիգրանուհու և նրա չուստերի մասին:

Վերջապես Վասիլը գնում ե մի զույգ չուստ, սակայն Տիգրանուհու սնունդվ գնած չուստերի դառնում են Վարսենիկի սեփականություն, իբրև թե նրա վոտքին մեծ լինելու պատճառով: Այդ առթիվ շատ մակերեսային դատողություն ե արել Վասիլը, մոտավորապես այն ձեռվ թե աշխարհը փուչ ե, լավությունն ել ե կորչում, վատությունն ել:

Զենթարդիօլ արդյոք, վոր ընդհարում ե յեղել Վարսենիկի և Տիգրանուհու միջև չուստերի համար, մեկը լաց ե յեղել, նորից բորիկ վոտքերով («առի ծամոն վերքի համար») արտը գնացել «պարտքի դիմաց», մյուսը չուստերը պահել ե հայրական տնից բերած սնդուկի մեջ: Ի՞նչպես հասկանալ Վասիլի դրածն այն մասին, թե «Տիգրանուհին խոռվեց, զոռով բերեցինք կալատեղից»:

Սեպտեմբերին ծնում ե Վասիլի յերկրորդ կոլը: Այդ որը նա ուրիշ բան չի արձանագրել: Սեպտեմբեր ամսվա նշանավոր գեղագերից ե և խոտի հաշիվը: Անցյալ տարի ցանած առվույտը յերկու անդամ հարելուց հետո Վասիլը շատ մանրամասն յելք ու մուտքի հաշիվ ե կաղմել: Յեկ մուտքը գերազանցել ե («մաքուր յեկամուտ խոտի կողմանից»):



Մի շաբաթ հետո ստացած գարու մասին գրելիս,  
հանկարծ մի՞տն ե ընկել Տիգրանուհին, թե գարու  
հաշիվն անելիս տանը վայնասուն ե ընկել, ձեռքը  
դողացել ե, ծածկել ե յերազահանը, վեր կացել:  
Ինչպէս ե յեղել, այդ ամենմին հայտնի չե: Դրված  
ե միայն հետևյալը.

«Տիգրանուհին մահացավ առանցի կարծիքի, տե-  
ղոց տեղ, լավ թաղեցինք. յեղավ ծախս ութը մա-  
նեթ փողով, ևս մի փութ գարի տերտերին, դումա-  
րով 9 մանեթ 70 կոպեկ: Նաև առի յերկու մոմ»:

Տիգրանուհու մասին ել ուրիշ վոչինչ: Տասնվեց  
տարի ապրեց, աշխատեց, մահացավ նույնպես հան-  
կարծ, ինչպես այն նորածինը, վորի մասին հուլիսի  
վերջերին հայրը գրել ե՝ «Գիշերս մահացավ նորա-  
ծինն առանցի անունը դնելու»:

Որագրում Տիգրանուհու մահվան առթիվ ուրիշ  
մանրամասնություն չկա: Վասիլը յերազահանի այդ  
յերեսն ել չըջել ե նույն բութ մատով, վորի կնիքը  
կա յերազահանի շատ յերեսների վրա:

Հայուրդ յերեսը, վոր գրվել ե յերկու որ հետո,  
սկսվում ե այսպես.

— Պարտքից մնաց տասնչորս...

25.

## ՅԵՎ. ԲԱՏՐԱԿԸ ԹՈՒՅԼ ՏՎԱՎ. ԻՐԵՆ...

Սրապը տավարը տեղալորեց, դավթարը կռնա-  
տակն առավ և գնաց կանցելար:

— Սրա'պ, ճրագրը վա՞ո թողեմ, — հարցրեց  
մայրը, ասեղի ծայրով պատրույզը վեր հանելով:

— Կարող ա յետանամ, գործս շատ ա ես գի-  
շեր:

Մի քիչ հետո մայրը ճրագը հանդցրեց, մտավ  
վերմակի տակ, կամաց կոկծալով, վոր Սրապի գոր-  
ծը շատ ե, աչքերը գիրը կտանի:

Կանցելարում Սրապը ճրագը վառեց և կռնատա-  
կի դավթարը բաց արեց: Անդիր գիտեր Մրցում ով  
լո՞նչ ունի, քանի՞ մանեթ հարկ ե ընկել, դյուղում  
լո՞նչ ե պատահել հերու, մեկել տարին, հունիսին,  
հուլիսին:

Սրապը սպիտակ թղթի վրա սկսեց շարել. «Գյու-  
ղումս գոյություն ունի փոկ և խորհրդի պատու-  
հանները քցված են. կա և սանիտարական սեկցի 6  
անդամով, վորից մարդ հինգ հատ և մի կին»:

Մի քիչ ել մտածեց, նայեց կանցելարի սեացած  
ոճորքին, աչք ածեց չորս կողմ, ասես պատերի քա-  
րերի վրա փնտում եր գրելիքը: Ունքերը իրար հա-  
վաքեց և շարունակեց:

«Գյուղս ունի յելից և մտից մատյաններ և գրու-

թյունները մտնում են և դուրս են գալիս՝ ինչպես  
կարգն ե»:

Վերջակետից հետո մի յերկու անդամ ծոծրակը  
քորեց, թաթախեց թանաքը, մի սատկած ճանձ ըն-  
կալ գրչի ծայրին, մատով ճանձը դեն քցեց և հեր-  
սոտած գրեց.

«Նաև գյուղում հակախորդային հեղափոխա-  
կաններ չկան»:

Ել ուրիշ շատ բան գրեց Սրապը: Գրեց, վոր մի  
կրահոր են շինել, վոր ահասունների մեջ հիվանդու-  
թյուն չի յեղել, քերծից յերկու յեզ և գլորվել, դո-  
դություն չի յեղել, գրեց, վոր «ոյցուղս աստիճանա-  
բար լավանում ե»:

Կավի ճրագի պատրույզը վառլում եր, լույսը  
մերթ աղոտանում եր, մերթ զորանում, պատերի  
վրա ճրագից ստվերներ ելին թրթում:

Սրապը կանցելարի մտից մատյանի մեջ մտցրեց  
և «ըզարերական միլպետից ամուսնացողների մա-  
սին կյանքի մեջ կիրառելու, նաև աղվեսի մորթին  
թանգ ծախելու մասին», հետո դուրս յեկալ նստեց  
կանցելարի դրանը:

Տներում ճրագ չկար, հողնած մրափով քնել եր  
գյուղը: Մրոցը՝ հեռու ձորում ընկած, կուչ եր յե-  
կել քերծերի տակ, տապ արել: Գյուղի ներքի ծայ-  
րում մի շուն կաղկանձում եր:

Նայում եր Սրապը քնած Մրոցին, հովը ծեծում  
եր բաց կուրծքը և Սրապը լիաթոք շնչում եր ամրան  
գիշերվա զովությունը: Դուրս յեկալ, վոր ամբողջ  
գյուղում միայն ինքն և արթուն, դրում և գյուղի  
մասին և ճրագը կանցելարի պատուհանից անթարթ  
աչքի պես նայում ե գյուղին:

20

\*\*\*

Սրապը ներս մտավ, գրածը կարդաց, հանդ ա-  
րեց ճրագը հանդցնի. բայց միտն ընկալ Դավթի  
բատրակը և որվա զրուցները նրա մասին:

Գրե՞լ թե վոչ: Կիմանան, Մրոցը մատի փաթա-  
թան կընեն, իսկ թե չդրի, վայ թե յերեսովը տան,  
վոր գյուղում յեղածը ծածկել ե չի գրել:

Դավթի բատրակը՝ Տիկոն, բոյը կարմ, բրդոս,  
վոնց վոր սարի արջ: Խոսելիս գլուխը կախում եր,  
աչքերը գետին դցում, խոսքի կուլ տալիս: Տի-  
կոն փոքրուց չբախն եր, Գյուղում նրան տեսնելու  
տնաղ ելին անում:

— Տիկոն ուլի հետ ա ծիծ կերել, — ասում ելին,  
ծիծաղում: Տիկոն ել ծիծաղում: Իբրև թե Տի-  
կոյին մայրը չի ծիծ տվել, այլ մի պառակ այծ:

Գուցե Տիկոյի մասին գյուղում ուրիշ խոսք ու  
զրուց չիներ, բացի այդ հանաքից, վոր հազար ան-  
դամ ելին ասել, — յեթե Տիկոն չաներ այն, ինչի  
մասին գյուղում խոսում ելին:

— Տեսա՛ր ինչ արեց Տիկոն...

— Են բրդոս քոթոթը...

— Տիկոն ել գյուղում չի յերեա՛, — ասում ելին  
ընկերները:

Յերկու որ առաջ Տիկոն թողել եր աիրոջ տու-  
նը, վոչխարը փարախում, մահակն առել ու լուսա-  
բացին դուրս եր յեկել գյուղից:

Յերեկոյան Սրապին իմաց ելին տվել, վոր Տի-  
կոն չկա, և Դավթի վոչխարը ուրիշն է տարել:  
Սրապը մարդ եր ուղարկել Տիկոյին փնտուելու, մար-  
դը վերադարձել եր առանց հետքը գտնելու:

21

— Տեսնես սարն անցավ ո՞ւր գնաց...

Սրապը մթնով գնացել եր Դավիթի տունը, հարցանելու, թե լ՞ոնչ ե յեղել:

— Մանուշ, պետք ա բոլորն առես թե չե վրադպատակով կկազմեմ, վերջը դու գիտես,— սպառնացել եր Սրապը, բայց սպառնալիքը չեր ոդնել:

Մանուշը մի գլուխ լաց եր յեղել, յերդվել, վոր սուս լուր ե, թշնամու սարքած, վոր Տիկոն այդ գեր գոմումն ել չե քնել, վորչափի փարախումն ե յեղել:

Սրապը տեսել եր, վոր հնար չկա, չի ասում:

— Դու գիտես, Մանուշ, Դավիթի պատասխանը կտաս: Յես իմ քննությունը վերջացրի:

Ասել ե տնից դուրս եր յեղել:

Բայց գյուղում ուրիշ բան եյին պատմում: Հարեվան կանայք փափում եյին, պառավները չանչ եյին անում դեպի Մանուշը:

— Ցեղե լիբր ա, Մանուշ, — ասում եյին նրանք չանչ անելիս:

Ո՞վ եր իմացել, ո՞վ եր տեսել այդ բոլորը, — Սրապը այնպես ել չիմացավ: Յերբ նրան հայտնեցին, թե գյուղում այդպիսի բան ե պատահել, Սրապը նախ չհսկատաց:

— Տիկոն չի անի, նամուսով տղա յե, — ասաց: Բայց լուրն ավելի յեր տարածվում: Առավոտ կանուխ ջրի գնացած կանայք վկայում եյին, վոր տեսել են Տիկոյին Մանուշի տնից դուրս գտվեա, չորաններն ուրիշ բան եյին ասում, թե Մանուշը Տիկոյի պաշարում միշտ յուղ ու պանիր եր դնում, զուլպա յե գործել նրա համար, թե Տիկոն սարում ասել ե.

— Այ մի Դավիթը գնար քաղաք, յես ել վիարախում չերի քնի:

Փողոցում մի քանի ալեոր մարդիկ Սրապին հանդիմանել եյին, թե Մրոցն իր որում այլպիսի բան չի տեսել:

— Մեր գյուղի իշխանն ել դու յես, — ասացին, կտրի: Միանդամից կտրի արդատը, վլոր ել չժառանդի, դյուզու չվարակի...

— Կանեմ, ապեր, կանեմ, քանի յես կամ, գյուղումս պետք ե լրբությունը ջնջի, — հայտարարեց Սրապն ալեորներին և մաքում վորոշեց անելիքը:

Հենց այդ յերեկոյան եր, վոր նա գնաց Մանուշը մոտ՝ քննության: Յերբ սպառնաց և տեսավ, վոր սպառնալիքն ել չի ոդնում, դուրս յեկավ:

Ճանապարհին Սրապը հիշեց, թե ինչքան գեղեցիկ ե Մանուշը և մի պահ զարցացավ, կարծես նրան առաջին անդամն եր տեսնում:

— Անիրավիդ աղջիկը քաշած պատկեր ա ելի, — մտածեց Սրապը և քայլերն ավելի արագացրեց:

— Հապա թե Դավիթն իմանա...

\*\*\*

Սրապը յերբ մտավ կանցելար, ուզեց ճրադը հանդցնի, միտն ընկալ Տիկոն, Մանուշը, գյուղի զրույցը:

Պետք ե հայտնել, թե վոչ:

Մեկ ել մտածեց Սրապը, մոտեցավ գրածին, գրեչը թաթակեց և ակսեց գրել շրջմիլակետին.

«Առւյնը տարվա հունձին գյուղիցս բացակայվում ե Դավիթ Խաչիեյանցը, վորն վոր գնում ե և

գյուղում մնում ե Դավիթի կնիկ Մանուշը, նաև  
նրանց բատրակը»:

Մինչ այստեղ Սրապը գրեց առանց դադար առ-  
նելու: Գրչի ծայրով վեր հանեց ճրադի պատրու-  
թը, քունքը քորեց և շարունակեց գրել.

«Յեվ Մանուշն ուրբաթ գիշերը մնում ե մենակ,  
վորն վոր քնում ե իր սենյակում: Յեվ Մանուշը գո-  
տից կանչում է բատրակ. Տիկոյին և ասում, վոր ին-  
քը վախենում ե մենակ քնելու, և քնում են միա-  
սին»:

Սրապն ուզեց հերիք համարի գրածը, բայց նո-  
րից կարդաց և ավելացրեց.

«Յեվ բատրակը թույլ տպավ իրեն մինչև այն  
ասոինքան . . .»:

\*\*\*

Եեր դավիթարը կուն տակ Սրապը քնած Մրոցի  
փողոցներով գնում եր դեպի տուն, ճամփին միտք  
անելով, — նրան այնպես եր թվում, թե մի ծանր  
քար գործվել է իր խղճից: Զեկուցման մեջ ասված և  
այն ամենը, ինչ վոր պատահել ե գյուղում:

Սենյակի մթնում տրեխները հանելիս մի անդամ  
ել Սրապի միտն ընկալ Մանուշը և ինքն իրեն ա-  
սաց.

— Անիրավիդ աղջիկը քաշած պատկեր ա,  
ելի . . .

25.

24

## ՍԱԲՈՒ

Նրանք անտառում են ապրում և վորովհետեւ ան-  
հաշելի ժամանակից ի վեր գյուղով խիտ անտառների  
մեջ ե, ճանապարհներից զուրկ, — Սարու գյուղի յե-  
րեխան այնպես է կարծում, թե աշխարհն անվերջ  
անտառ է, վորտեղ մարդը բացուտներում ցանում է  
կորեկ, խակ արջերը հավաքում են ընկած կաղինե-  
րը, ծառերը ձղակոտոր անում և հագեցած պառկում  
կորեկի արտում:

Անտառն իր կնիքն է գրել Սարուի վրա: Վոչ մի-  
այն ափսեներն են անտառի փայտից, արորն ու շե-  
րեփը, այլև անտառից ե նրանց ուտելիքի մեծ մասը՝  
վայրի տանձն ու սալորը, զանազան ընդեղեն և ար-  
մտիք, վոր նույնքան համեղ են նաև անտառի խոր-  
քերում ապրող վարագների համար:

Վոչ մի տեղ արջին այնքան լավ չգիտեն, վոր-  
քան Սարու գյուղում: Յերեխան ել կասի, թե արա-  
հետի թարմ հետքը արջինն է, թե գայլ և անցել և  
կամ պախրան ե իջել ձորլ՝ ջրի: Նրանց պատմու-  
թյունների մեծ մասը վայրի գաղանների մասին է:

Ահա առասպել մի հերոս, անունը Գեռւ, վորի  
գերեզմանի սուր քարը հիմա ել սրբատեղ և Սարու  
գյուղում: Ծերունիները յերիտասարդ վարսորդներին  
ավանդում են Գեռւի պողպատե թրի մասին, վորի  
մի հարվածով նա կիսում եր արջի գլուխը: Մի այլ

25

Հելոս, վորի վրա հարձակվել են յերեք արջ, կոփ  
և բռնել մարդը նրանց հետ, մեկին սպանել, ապա  
բարձրացել ծառը, վոտքի թաթը թողնելով գաղանի  
յերախում:

Շատ տներում պատերից կախ արջի մորթիներ  
կան, դռան ճակատին մեխել են պախրայի գլուխը,  
ճյուղավոր յեղյուրներով, գանդի խոռոչում՝ խոտ,  
աչքերի փոսում գունավոր փալաս: Բաց բերանից  
չոր խոտի ծղնոտներ են յերեսում, ասես պախրան  
դիշեր-ցերեկ խոտ ե ուտում: Ո՞վ գիտե, գուցե, վեր-  
ջին մամուռը գեռ մնացել ե ատամների արանքում,  
յերբ Սաբուի վորսորդը ծառի յետեկից պախրայի վրա  
կրակեց կայծքարով հրացանը:

Կա մի հին աղանդ Սաբու գյուղում: Մթնած այդ  
աշխարհում հին առասպելների հետ հավասար մնա-  
ցել ե այդ աղանդը: Յեվ ինչպես անտառի գաղանը  
մնացել ե անաղարտ, Սաբու գյուղում այդ հնորյա  
հավատքը մնացել է, ինչպես անտառի կուսական  
թափուտը:

Մագաղաթյա մի ձեռագիր խոսում ե վաղեմի  
արեւորդիների մասին, վրոնք տեղավլորված եյին  
Արաքսի ճախ ափի լեռնաշխարհի վրա: Յեվ աշխարհն  
այդ կոչում եր Արեվիք: Բարձր չինարներ կային  
արեւորդիների աշխարհում և ամեն առավոտ արե-  
վածագին չինարիների տակ արեվին ծունը եյին  
դնում: Գուցե և կրակապաշտ իրանից մի կայծ թռել  
ե Արաքսի այս ափը և դարձել ուրույն հերձված:

Այդ աշխարհում ե Սաբուն: Այնտեղ ել կան  
բարձր չինարներ, սակայն արեկին ծունը չեն դնում,  
գուցե նրա համար, վոր խավարածոր անտառներում  
քիչ են արեստ որերը: Հիմա ել չինարները սուրբ

և շար աչքի դեմ նրանց բներին կապում են գունա-  
վոր փալախում:

Սաբու գյուղում թուրքեր են: Վորովհետեւ ա-  
ղանդավոր են յեղել, հնում հալածել են նրանց և  
յինթրկել ծաղրի: Սաբուն ավելի յե քաշվել իր  
պատյանի մեջ և ոլինդ փակչել հին հավատքին: Տա-  
րիներ շարունակ թավուտները մնացել են սաղար-  
թախիտ, արեկի շողը չի թափանցել խորքի սովերու-  
տը, փակել են ընկած գերանները և հողի հետ բոր-  
բոսնել ե գերան ու տերեւ:

Սաբուն մազ չի խոռում: Բեխ ու միրուք կտրե-  
լը համարում ե մահացու մեղք: Դրա համար ել մար-  
դիկ յերկարմորուս են, բրդու: Մազ ե պատել այ-  
տոսկրին, մազոտ են ականջի խոռոչները: Ճակատի  
մազերը կախվում են մինչև ունքերը և ճակատը չի  
յերեսում: Նրանք ծիծեռնակի թեկի նման ու միրուք-  
ներ ունեն:

Սաբուն մոռայլ ե: Անտառն ե վարժեցրել ուն-  
քերը կախ և կացնի կոթից պինդ բռնած լուռ ման  
գալ ծառերի տակ: Կացնով կարելի յե վոչ միայն գե-  
րան կտրել, այլև ջարդել արջի գանդը առասպել  
Գեռուշի պես:

Խուսափում են ուրիշ գյուղից աղջիկ ուղել: Շատ  
հազվադեպ են ուրիշները համաձայնվում աղջիկ  
տալ Սաբուն, վորովհետեւ աղանդը գաղտնի ծեսեր  
ունի, վորոնց մասին հարևան գյուղերը հազար ու  
մի պատմություն են պատմում: Յեվ քանի վոր ծեսը  
կատարում են այն ժամանակ, յերբ գյուղում ոտար  
մարդ չկա, դրա համար ել ճշգրիտ ինչ շատ քչերը  
գիտեն, թեեւ վոմանք պինդում են, վոր իրենք այդ  
ծեսին ականատես են յեղել:

Սկզբում Սարու գյուղում ընդունված կարգ ե  
յեղել, վոր մի կին մի քանի մարդու հետ ապրի,  
սայց իրանից յեկել և աղանդի մեծը և հայտարա-  
րել, վոր մարգարեն այլևս նման ծես չի ընդունում:  
Այդ վաղուց ե յեղել, թեև հիմա յել շատերը ասում  
են, վոր Սարու գյուղում այդ ծեսը դեռ մխում ե,  
մոխրի տակ անթեղած կրակի նման:

Կա մի գիշեր, յերբ վոչ լուսնյակ ե յերեսում,  
վոչ աստղեր: Ամպ ե իջնում անտառների վրա, ամ-  
պը ձորակներով սողում ե մինչև գյուղը, իրդե ծուխ  
փաթաթում տուն ու մարագ: Այդ գիշեր ամպի հետ  
գաղաններն անցնում են գյուղի փողոցներով: Արջը  
թաթը կոխում ե կավով ծեփած քթոցի մեջ, լիզում  
մեղրը, գայլը լիզում ե գառան տաք արյունը: Շներն  
իզուր են կաղանճում, թագնիելով դեղերի մեջ:

Այդ գիշեր Սարու գյուղի յերեխաները գլուխ-  
ները կոխում են քարձի տակ, վոմանք լաց են լինում:  
Յեթե լույս լիներ, Սարու գյուղի աղջիկներին ու  
կանաց կարելի յեր տեսնել աղոթատան կտուրի վրա  
իրար մոտ կանդած, վորպես գայլից խրտնած հոտ:

Ներսում խավարի մեջ մի քանի հողի վողք ասող  
կանաց նման աղիողորմ հեծկլառում են, ասում ա-  
ղոթքի արարերեն քառերը: Ամեն մի յերդից հետո  
ներսը մութի մեջ ձգվում են հարյուրավոր բրդոտ  
ձեռքեր դեպի յերդիկը, վերից կանայք հերթով ներ-  
քել են կախում իրենց գունավոր գոտիները: Աղո-  
թատան բազմությունից մեկը խլում է այդ գոտին  
և ապա յերբ վերջին աղջիկն ամոթխած արձակում ե  
բարակ գոտին, աղոթքից հետո բազմությունը խո-  
ժում ե դեպի անտառ, քարչ տալով կանաց և աղ-

ջիկներին, վորոնց գերի յեն վարում հենց այդ գո-  
տիներով:

Այդ գիշեր վոչ լուսին կա, վոչ աստղալույս...  
Հին աղոթատանը մինչև լուսաբացի վերադար-  
ձը հեծկլառում և աղոթում են պառավները:

Արաքսի մյուս ափին մի գիշեր յերեաց վոտքից  
դլուխ կանաչ հաղած սեյիկը, հին աղանդի մարդա-  
րեն, վոր յերբեմն հեռավոր իրանից ծպտյալ անց-  
նում եր սահմանը, և հասնում մինչև Սարու:

Սեյիդն անցավ սահմանը և նրա մետաքս զգես-  
տի փեշերին, յերբ ձին ճեղքում եր գետը, Արաքսի  
ջուրը ցողեց պղտոր կաթիլներ:

Այդ գիշեր Սարու գյուղում մանկամարդ մի աղ-  
ջիկ առրքի առաջ գորդ եր գործում: Բարակ ծամեր  
ուներ աղջիկը, ծամերի ծայրից կախ ելին մետաղյա-  
րութուններ: Աղջիկը գլուխը աջ ու ձախ եր զարձ-  
նում, դեղնած մատներով բռնում գունավոր թելե-  
րը, թելը թելին հաղցնում, ապա ծանր սանրով կո-  
փում հանգույցները: Դարսավոր ելին իրար վրա  
հանգույցները, ծնվում ելին նախշեր, նուան ճյուղեր,  
տերեններ, տերենների մեջ յերկու թե, վոր աղջկան  
թվում եր յերգող թռչուն: Ամեն անդամ, յերբ աղ-  
ջիկը սանրը զարկում եր հյուսածին, շարժվում ելին  
գույնզգույն կծիկները, զրնդում ելին և ծամերի բո-  
ժուժները:

Յերբ ձիավորներն անցան փողոցով, չները հա-  
ջեցին կանաչ արայի վրա: Աղջիկը գլուխը թեքեց,  
սեյիդը ճրագի լույսով տեսավ և գորդը, և տորքի ա-  
ռաջ նստած աղջկանը: Նրան թվաց, թե աղջիկն ինքը  
մի գունավոր նախշ է գորդի վրա:

Այդ տարին եւ յեկալ մթին գիշերը: Յեվ յերբ  
խավար աղոթատան մեջ դպարեց առաջին յերգը,  
կանաչ աբայի յերկու թևեր ձգլեցին վեր, դեպի  
յերդիկ: Վերկեց կանայք հրեցին մանկամարդ աղ-  
ջըկան և մութի մեջ մի քանի կանացի ճեռքեր ար-  
ձակեցին աղջկա անմեղ գոտին և նրա բարակ մատ-  
ները յերդիկով կախեցին գոտին: Ամոթիած զրըն-  
դացին ծամերի բոժոժները: Այդ գիշեր մի դայլ պի-  
տի լիղեր գառան ամրիծ արյունը: Յեվ յերբ անտա-  
ռում աղջիկը ահից ճշաց, բնի մեջ քնած մի միրհայլ  
զարթնեց և փոխեց տեղը:

Առավատյան սեյիդը նոր պատգամներ կարդաց:  
Նրա ամեն մի խոսքը սրբազն որենք եր Սաբուի  
համար: Յեվ այն, ինչ հայտնեց նա աղջկա ծնողնե-  
րին, ընդունվեց իրրե մարգարեյի խոսք:

Հարկավոր եր գորդն ավաբակել, վորովհետե  
գորդը պիտի կախվեր սեյիդի տան պատից, իսկ աղ-  
ջիկը պիտի քաղցրացներ նրա դառն ծերությունը:  
Գորդի թելի մնացած նախշերը խառնիխուռն գուրս  
յեկան: Գույները տեղական վառ եյին, ասես հրդե-  
հում եյին գույները, տեղական ավերված, գորչ:  
Աղջկա մատները գողում եյին, յերբ բոնում եր գու-  
նավոր կծիկները:

Շները մի անգամ եւ հաջեցին, յերբ ձիերը  
գլուխները թեքեցին դեպի հարավ: Մի ձիու վրա  
փռված եր գորդը, վրան՝ աղջիկը: Աղջիկը վերջին  
անգամ նայեց պարապ տորքին, մորը, տեսավ հայ-  
րենի անտառը և գորդի նախշերի վրա արցունք կա-  
թեց:

\*\*\*

Հիմա Արաքսը կաթիլներ չի ցայտում կանաչ ա-  
բայի փեշերին: Անտառների մեջ դեռ մնում է Սա-  
բուն: Աև միրուքով մարդիկ գերաններ են կացնա-  
հատում և ժողովում վայրի տանձ:

Մյուս ափին իրանի լերկ ապառաժներն են, ա-  
րևեց խանձլած տափարակները: Գյուղերը կանաչ  
ուղների պես են, ժայռերից կախված պարտեզներ,  
վորոնց միջով առուները հոսում են և ավազ խառ-  
նում Արաքսի պղտոր ջրին:

Այն ափի գյուղում մի պառակ կին, յերբ առվի  
ջրի մեջ լվանում է մաշված գորգը, ձեռքը ճակա-  
տին գրած, նաև նայում է հեռու, ուր անտառների  
մեջ պահված է հայրենի Սաբուն:

Խունացած գորգի նախշերը առվի ջրում հան-  
կարծ պայծառանում են և պառավին այնպես է  
թվում, թե ծամերի ծայրին հնչում են մանկության  
անուրախ բոժոժները:

26.

## ՄՈՒՐՈՅԻ «ԶՐՈՒՅՑ»-Ը

Յերկրութ որն եր՝ Մաղղայում ելինք, Ալա-  
դյաղի լանջի ամենաբարձր գյուղերից մեկում, վրո-  
տեղից բացվում է հիանալի տեսարան զեպի դաշ-  
տը: Ներքե վուլած եր Արագլայանի տափարակից  
մինչև Անի կայարանը հասնող ընդարձակ տափա-  
րակը, գյուղերն ու քաղաքները, փոր ցամաք դաշ-  
տում կանաչ պարտեղների ելին նման, յերկաթու-  
դու սպիտակ կայարանները, անբաժան ակացիանե-  
րով ու բարդիներով:

Յես և ընկերս նստել ելինք քարին, հիացմուն-  
քով դաշտին ելինք նայում և փորձում գտնել ծանոթ  
գյուղերը: Արևը կախ եր ընկել մայրամուտի կող-  
մը: Սարից զոլ քամի յեր վէռում, վողջ դաշտը վո-  
ղողված եր արևի լույսով և արծաթի հալոցքի նման  
պաղպում եր վոչ միայն Արաքսի ոճանման հոսանքը,  
այլև մի քանի փոքրիկ լճակներ ու գյուղական ա-  
ռուներ:

Մեր յետել Մաղղան եր՝ տափարակ կտուրնե-  
րով նոր տներ կանաչների մեջ: Յերկու կին. կտուրի  
վրա ցորեն ելին քամում: Ուզը ջինջ եր և թափան-  
ցիկ. արևի տակ փայլիլում ելին ցորենի քիստերն  
ու թեփը, յերբ վոսկեզույն փոշու: Հետ խառնված  
ցորենը կանաչը մաղում ելին և որորվում:

Մեղնից մի քիչ հեռու արտերն ելին: Վոտքերը

վեր քշտած մի մարդ ջուր եր անում: Լոսում ելինք,  
թե ինչպես եր բահը զբնգում, յերբ խրվում եր  
ավազու հողում: Զօրակից յերգի ձայն եր լովում:

Կոռուկն իջել և գյուլն...  
Յարս ման կտա չոլին.

Յերգը մերթ ընդհատվում եր, մերթ շարու-  
նակվում: Ընկերոջս հետաքրքրությունը շարժեց  
այդ:

— Ի՞նչ անելիս կլինի են յերգողը, հարցրեց  
նա: Յես փորձեցի յերգի ընդմիջումներից վորոշել,  
բայց չկարողացա: Ընկերս չհամբերեց, մի քայլ ա-  
րեց ու նայեց ձորակի կողմը:

— Հնձվոր ե, — կանչեց նա: — Հենց վոր կու-  
նում ե, լուսմ ե...

Մեր գլխավերել՝ բլրակի յետեկից լովեց մի  
ձայն՝ «Հոլե՛, հոլե՛...»: Մեկը սուլեց: Յետ նայե-  
ցինք: Վոչիարի հոսը բլուրից իջնում եր: Մի այծ  
սարձրացել եր քարի գլուխն ու տմբումբացնում եր  
միջուքը: Բլրակի գլխին կանգնել եր հովիվը՝ մա-  
հակին կոթնած: Կանգնել եր արձանի նման ու նա-  
յում եր մեղ: Յերեսում եր, վոր նա վաղուց և տեսել  
մեզ: Ապա սկսեց իջնել: Հեռվից արդեն նկատելի  
յեր, վոր նա կաղում ե:

— Յես կաղ չորան կյանքումս չեմ տեսել, — ծի-  
ծաղեց ընկերս:

Հովիվի հագին տեղական, թեւերը կտրած «վոթ»  
եր, մորթի գեպի գուրս: Պայուսակը ցնցվում եր,  
յերբ նա քարից քար եր թռնում:

— Տեսնես ես սարի գլխին նա մեր որերից ի՞նչ  
դիտե, — ասոց ընկերս ու ակտոսանքով ավելացրեց.



— Շիկն չեմ տեսնում, թե ունեցել եր՝ փշել  
կտայինք...

Հովհանքը մոտեցավ:

— Բարի տեսանք, — ասաց և գամփոխն սաս-  
տեց: Շունը նստեց:

— Անունդ ի՞նչ ե, — հարցրեց ընկերս:

— Մուրո՛:

— Մուրո՛, հապա շվի չունե՞ս.

— Փո՞ղ: Յեվ ծպացրեց:

Նրա մի վոտը կարճ եր: Կանգնելուց մատերի  
ծայրը հաղիվ եր գետնին դիպչում: Դեմքը ծաղկա-  
տար եր, ձախ աչքի տակը՝ ճոթուած: Նրա զգես-  
տը, գդակը, դեմքը, ձեռքերը համարյա հողագույն  
ելին, արևից խանձված, քամուց ծեծված: Սակայն  
մի քաղցրություն կար նրա միամիտ ու միքիչ կոչտ  
գեմքին:

Մուրոն նստեց:

— Մուրո՛, կարգալ դիտե՞ս — Նա ծիծաղեց:

— Ուստի՞ց:

Ընկերս սկսեց հարց ու փորձը: Մուրոն գյուղի  
հովհանքն եր: Գյուղում մի «քոլիկ» ունի, վորի դուռը  
դեռ չի կախել: Քնում ե վոչսարատիրոջ տանը՝  
հերթով: Վոչ վոք չունի: Սասունում ել վորր և յե-  
ղել:

Հանկարծ ընկերս հարցրեց.

— Մուրո՛, դու Լենինի անունը լսա՞ծ կաս...

— Հբա ի՞մալ, — մի քիչ սրտնեղեց նա. — Յես  
Լենինի զրուց լե դիտեմ...

— Ի՞նչ զրուց, մի ասա լսենք, — խնդրեց ըն-  
կերս: Մուրոն ամաչելով մեղանից «ծդարա» խնդրեց  
ու սկսեց.

— Լենին ունուս եր: Յուր հեր լե չքավոր եր,  
պապ լե: գնաց կարգալու, ես յան, են յան, մի հու-  
սումարան ուստ եկալ, ասալ՝ չքավոր եմ, ինձի  
կառնե՞ք, կուզեմ կարգացվոր եղնիմ: Առան. մի քա-  
նի վախտ կարգաց, վոր ուսում թամմեց, խելքի  
եկավ:

«Կոր խելքի եկալ, իմացավ թե աշխարհի վնաս  
ուստից կեղնի: Մտածեց, մտածեց, տեսավ, վոր  
վնաս ուսուսի թագավորից կեղնի: Թոփի արեց իրենց  
հուսումարանի տուց, թե ընկերներ, ենքան վոր  
կարգացվոր եք, իմա՞լ կեղնի, վոր չքավոր դառը  
դատի, հարուստն ուտի, ինք մնա չլուս, սոված,  
ուութ, մի կարկատած լեֆ լե ջունի, որ մեջ պառկի:

«Ծնկերներ ասին. եղեր չեղեր ե, եղպես եղեր ե,  
եղպես լե մացեր ե: Լենին ասավ. աշխարհն եսպես  
չի մնա, եսոր ամպ ե, եղուց պարզ արե: Մինչի  
մենք ընկերություն չանենք գիրար, թագավոր լե մզի  
կմորթե, հարուստ լե մզի կճնչե, հող լե մզի չողնե:  
Մկրատ իրեն ե, կտոր լե իրեն ե: Զուղը ուղղու-  
թյուն կասեմ, վոր մինչի թուր հարուստի բերան  
չառնի, պարզ խոսք չի ասի:

«Ծնկերներ համոզվեցին, ասին կազմակերպու-  
թյուն սարքենք: Սարքին. Լենին ասավ, ընկերներ,  
ուժով կացեք, վոր պիտի կոխվ տանք:

Եղ վախտ թագավոր մի հավատարիմ մարդ  
կունենա: Կկանչի եղոր, կասի որ յերթա պտուտ գա-  
յերկեր. կուզեր իմանա թե՝ ժողովուրդն ի՞նչ կասի  
չի ասի թագավորից: Եղ մարդ յոթ տարի ման կդա,  
վերջը կդա, թե թագավոր, լավ խոսք քիչ իմացա:  
Թագավոր թախտից կիջնի, թե ինչ տեսել ես, չիս  
ունել, դմեն լե պատմի:

«Կասի՝ թագավոր, իմացած յեղիս, վոր եսպիս տսվերկու տարեկան մի տղա, անուն Լենին, քեզ փոքճանք կբերի: Թագավոր վախուց հրաման ետուր, թե տսվերկու տարեկան Լենին քշեք աքսորյան...»:

Արևը թեքվում եր կարմիր ամսի յետել, իրին չողնած հնձվոր, վոր վրան և առնում թաղիքը: Ճկում եյին ծտերը, քարից քար թռչում, կարծես չեյին ուղում, վոր յերեկո լինի:

Մուրոն ծուխը խոր քաշելով շարունակեց.

— Քչեցին աքսորյան, ելի չխրատվավ: Լենինի ախպեր որ իմացալ, թե պստի ախպեր աքսորյան և, ասավ. ենիմ երթամ ինչքան թագավոր կա մորթեմ: Եղ խաբար լե շուտով հասուցին թագավորին, թագավոր ես անդամ կատղավ, վոտք գետին դարկավ՝ թե բոնեք բերեք, իդա մանչ վի՞ր և,

«Բոնին բերին: Թագավորը հարցուց՝ ո՞վ ես ասավ՝ Լենինի ախպերն եմ. ասավ՝ անունդ ի՞նչ և, ասավ՝ Ալեքսան: Աս խոսք ասել եր, չեր ասել, թագավոր թուր հանեց, զարկեց արյունք ծով արեց: Լենինն իմացավ, ասավ. «Վա՞յ իմ Ալեքսան»...Շատ արցունք թափեց տիսպոր համար, բայց ելի ուժովցավ, ասավ՝ ընկերներ, յեկեք գաղեթ սարքենք:

«Ընկերներ համոզվան, գաղեթ հանին, ասին՝ ո՞ւ ամբողջի գլխավորն եղի: Լենին ասավ՝ թե կոիվ պիտի տանք, ով զենք չունի, թող առնե, ուժով միանք, թագավորի վրա քշենք: Ես ել վոր իմացավ թագավոր, կատղեց, մարդ ճամբեց, վոր աքսորյան Լենինին մորթեն:

«Ես անդամ չքավոր բանվորներ ասին, վոր թագավոր մեր Լենին ապանե, հարա մզի ուղիղություն ո՞վ ցուց կիտա: Զբնք թորդի, ասին, մենք լե կեր-

թանք կոիվ կիտանք թագավորի վրա: Լենին ժողովք արեց, նամակ գրեց զմմեն չքավոր բանվորներուն, թե սլատրաստ կացեք ես Փլան ամիս կոիվ կերթանք թագավորի վրա:

«Առավ իր ընկերներ, իր զենք կապեց, եղ Փլան ամիս Լենին եկավ ուռուս թագավորի պալատ: Կանչեց՝ յել, յես աքսորյան Լենինն եմ: Ուժեղ կպան զիրար, շատ արյուն թափին: Լենինի թուր ճեղքեց թագավորի գլուխ, յերկու կես արավ, թագավորին տապալեց, ենոր սում քուլֆաթ զարկեց, ջարդեց, լավ հողեր, լավ գութըներ, ինչ վոր թագավորն ուռներ, զմմեն վոսկի հարստություն բաժանեց չքավորներուն, ասավ՝ զնացեք ճեր քեփին ապրեք... Զքավոր բանվորներ ուահաթցան: Լենին հավաքեց իր ընկերներ, ժողովը նստան, փորոշում գրին, վոր ել կոիվ չեղնի: Ելավ մի բարձր քար, ասավ.

— Ժողովուրդ, իրաղաղ ապրեք: Ել մզի կոիվ չկա...

«Յեղավ խորհրդային իշխանություն...»:

Մուրոն լոեց ու գլուխը վոչխարների կողմք վարձնելով, հոտի առաջնորդ այծի վրա կանչեց այնպես, վոր հատուկ ե յեռան հովիվներին և վորի հնչյունը վոչ մի կերպ չի կարելի տառերով գրել: Տեսնելով, վոր կանչն անհետեանք անցավ, Մուրոն նստած տեղից քար չալրաց այծի կողմը:

Մարմնի մյուսս պակասություններից բացի, Մուրոն նաև ձախլիկ եր: Սակայն այդ նրան չխանգարեց քարը հասցնելու ճիշտ այն կետին, վոր հարկավոր եր՝ այծը հետ տալու համար: Յեկ վոչխարներն ել այծի հետեւից գլուխները դարձրին դեպի արևմուտք:

Մուլս, իսկ ե՞նչ պատահեց Լենինին, զե-  
տու, անհամբեր հարցրի յես;  
— Զբուց չխլսավ դհա, կեցի... — Յեզ շարռւնո-  
կեց.

«Թագավորին որ զարկեց, հարուստ չխլսավ:  
Վոր փախավ, վոր լե ահուց մահացավ: Մնաց մի  
հարուստ մարտ: Զոր նստեց միտք արավ, դիւեռ  
չուրի լուս միտք արավ, թե ճնարքով Լենին ջնջի հո-  
ղի յերեսից: Վերջը հնարք դտավ: Կանչեց մի աղ-  
ձեկ ասավ՝ աղջիկ, վոսկի կուզե՞ս. ասավ՝ կուզեմ:  
Սղջիկ ելավ զնաց Լենինի դռան մոտ կեցավ: Պահա-  
պաններ յելան հարցրին՝ աղջիկ դու վի՞ր ես. ասավ՝  
չլուաի աղջիկ եմ, Լենին իկա խնդիր ունեմ: Լենին  
երավ դուրս: Ֆայտոն նստեր եր չեր նստեր, աղջիկ  
եղարկ. Լենին ասավ՝ դրան մի սպանեք, իմացեք թե  
ո՞վ ճամբեց: Իմացան, վոր են հարուստ ճամբեց,  
հարուստի վոր փառը լե տրորին, յեղավ հավար,

«Մի քանի վախտ անց Լենին հիվնդցավ: Որ հի-  
վնդցավ, կանչեց իր ընկերներ, իր կնիկ, իր զորք,  
ասավ՝ ընկերներ, յես կմեռնեմ, իմ խրատներ, իմ  
խոսք կմնա աշխարհի յերես:

«Լենին մեռավ... Յոթ որ, յոթ գիշեր սուր ա-  
րին, տարան մի բարձր տեղ թաղին, որ արևուց մոտ  
եղնի...»:

Մուլսն տեղից վեր կացավ, պայուսակն ուսր  
նետեց:

— Համլա զբուց (այսպիսի զբուց), — ասաց ե  
խոնարհ զլուխ տալով հեռացավ, փայտը քարեքար  
դիպցնելով: Քայլելուց նա ցնցվում եր, կարծես ա-  
մեն քայլարիսին պիտի ընկներ, յեթե մահակը քա-  
րին դեմ չսար:

— Տղա լառ, իդա կուտ (ցորեն) վի՞ր ե, — ա-  
ռուների մուից կանչեց մեկը:

Մուլսն հավաքում եր վոչսարը: Լսելի յեր նրա  
մեղմ սուլոցն ու ձայնը — «Հոլե՛, հոլե՛... քըսս,  
քըսս»...: Քիչ հետո վոչսարը գլուխը թեքեց դեպի  
դյուդր:

— Հը, վո՞նց եր... — հարցրի ընկերոջ:  
— Յերբեք չեյի սպասի...

Մենք նստեցինք, մինչև իրիկվա նրբին լազուրը  
հարլեց մութի մեջ, թանձրացավ խավարը, և դաշտն  
ու դիմացի լեռնաշղթան սուրվեցին մթնում: Արաքսի  
արծաթ գոտին նիրհող թռչունի նման պահվեց յե-  
ղիդնուտների մեջ:

Յեվ ինչքան թանձրանում եր մութը, այնքան  
վառ եյին փայլվում ելեկտրական լույսերի շղթա-  
ները: Ահա Յերևանը, Սարգարաբատի կայարանը,  
Վաղարշապատը, Այգրի ջրհանը:

Կարծես մութ ովկիանի վրա լողում եյին հրա-  
վառ նավեր...

## ԶՈՐԵՐԻ ԼՈՒՅՍԸ

1.

Տեղատապագի անձրեխն նա բաղխեց տան դուռը : Ներսը քնել եյին վորդին, հարսը և թոռը : Ապա անձրմասան քամին ծեծեց դուռը, ներսում ճրագ վասեցին : Դուռը բացվեց և անձրեխ տարափի հետ տուն մտավ Սիդերո Սավվան :

Նա գործիքների կաշվե սղայուսակը դրեց անկյունում, կախեց յերկաթե ծողով կավե ճրագը, վոր հանդցրել եր քամին : Յեկ ասաց վորդուն .

— Լազր, վորդիս, յես յեկել եմ, վոր դնամ, վորովհետեւ յերեաց այն նշանը... Յես քնեցի գետնի տակ և յերը զարթնեցի, տեսս հանդում եր իմ ճրագը : Հետո դում-դում մի ճայն յեկավ, լազր, մի գորավոր ճայն...

Վորդին հասկացավ, վոր հայրը մահամերձ է : Այն յերկյուղը, վոր համակել եր հորը, անցավ վորդուն, անցավ և հարսին : Կարծես դռան շեմքին ինքը մահն եր՝ անձրեախառն այդ փոթորկին, յերբ կայծակի հրեղեն լախտը խփում եր լեռների լանջերին :

Հայրը գդեստները հանեց, մաքուր լվաց ձեռքերը և յերեսը, հանձնեց իր զարմանալի մուրճը, հադակ սպիտակ շալիկ և յերբ յեղավ լուսաբաց, որութալով դուրս գնաց գերեզմանատուն : Նրա հետեւց գնացին սարսափահար բարեկամները, վորոնցից վոչ

մեկը չհամարձակվեց հետ պահել նրան : Նրանք գիտեյին, վոր Սիդերո Սավվան, վոր կնշանակի Յերկաթ Սավվա, — ուրիշի խոռքով յերբեք հետ չի դարձել մի անդամ բռնած ճանապարհից :

Կամբջի վրա վորդուն ասաց .

— Լազր, այս գետի ափին մի աղբյուրի ջրի մեջ կիխառես խմ մեծ դանակը և վորտեղ գտնես, գնայ այնտեղից, ինչքան թուչում և մեղուն և կդտնես մեծ գանձեր՝ քեզ և աշխարհի համար ...

Հետո համարյա վաղեվազ բարձրացավ գերեզմանատան քրուրը և ընկավ, ինչպես հասկը մանդազի գարկից : Նա պառկել եր կողքի վրա, յերեսը դեպի իր կնոջ խոնավ վոսկորները : Պառկել եր մաքուր շապիկով, ինչպես ամուսնության առաջին գիշերը :

Յեկ դեռ ուրիշ առասպելական զրույցներ հերոսացնում են այն զարմանալի վարպետին, վորից մնում և միայն յերկու քանդակ և պողպատե մի գործիք : Իսկ ինչ նրա գերեզմանն ե, այդ խառնիխուռն թափած քարի վշարանքներ են, մնացորդը այն նշանավոր արձանի, վոր բարձրացրել և ինքը՝ վարպետ Սավվան իր կնոջ գերեզմանի վրա՝ մարմարից, բարպարտից և մոխրագույն կրաքարից :

Այդ մահարձանի վրա քանդակել ենա յերկու վողկույզ, մյուս եջին՝ մի նիհար բորենի, սուր ժանիքներով, մի այլանդակ գազան, վոր նայում և նույն այդ վողկույզներին : Յերբորդ յերեսին միայն բորենին ե, ավելի նիհար, ավելի ահավոր, ցցել և զունչը գեպի յերկինք, և թվում և թե վոռնում և մենակությունից և ահից վերջին յերեսը պարապ և և միայն շրջանակներն են հիշեցնում չորս կողմի համաշափությունը :

Յանկացե՞լ է, Սավվան ասել, վոր նույնիսկ բորբնին կանհետանաւ և կմնա տիեզերական լոռությունը՝ անմարդաձայն և անշումնչ, յերբ բորբնին վոչընչացնում և ծաղկած այդին: Գուցե հոգնել և բազուկը և այլես չի գտել վոչ մի գաղափար պատկերելու վերջին ամայությունը: Բայց նա ձեւ և տվել ամբողջ արձանին. այդ նետ է, սուր ծայրը դեմի յերկինք, կարծես ահա պիտի թուչի նետը և մեխի յերկնքի կողը:

Մի ջերմեռանդ հույն, վորի մոտ են յեկեղեցու բանալիները, յերբ ցույց տվեց Սավվայի յերկոտրդ հիշտակը, ասաց, վոր այդ սուրբ Գևորգի գլուխն է: Միամիտ մարդ... Յեկեղեցու մայր գուան վերեւ, Սավվա Սիդերոն քանդակել և կանացի մի գլուխն, մի լուսավոր յերես, վորի փափուկ այտերի վրա կան փոսիկներ և աչքերը ժպտում են: Յերկու Փալուս դրկել են կնոջ պարանոցը և թվում ե, թե հենց այդ ե նրա ժպիտի պատճառը:

— Իսկ սրանք վոսկորներ են խաչի նման... վորովհետև Սավվան մեծ վարպետ եր և սուրբ մարդ, — հավատացնում եր այն ջերմեռանդ հույնը, ձեռքին ծանր բանալիները:

Յերբ «Վոսկե գահի» բարձրության վրա կազր դողդոջ ձայնով յերգեց իր հոր՝ Սավվա Սիդերոյի դոփը, մի քաղցր յերգ, վոր հորինել եյին նրա բարեկամ վարպետները, յես լսում եյի խաղի վերջին անընդհատ կրկնվող «Սավվա... մարմարա... Սավվա Բարբարա», վոր նշանակում եր.

«Սավվայի սիրած մարմար... .

«Սավվայի սիրած վարպետ... .

Իմ աչքի առաջ յելնում եր յերկու վողկույզը և

բորբնին, ամայի անապատը, ապա նրա կինը՝ սպիտակ Բարբարան, կնոջ մարմարե պարանոցի վրա իբրև ժանյակ անարատ Փալուսը:

2.

Վորդին գնաց հոր ճանապարհով:

Նա ևս դարձալ քարի վարպետ, սակայն չեր սիրում այն, ինչ Սավվա Սիդերոն՝ մահարձաններ և քանդակներ յեկեղեցիների վրա: Նա յերբեք չմտավ յեկեղեցի, գուցե նրա համար, վորպեսդի չտեսնի հոր քանդակը և չհիշի այն անձրեախառն փոթորիկը և խալար գեշերը, հոր սպիտակ շապիկը և մահը:

Լազրը գնաց Շիրվան, Իմերեթ, յեղալ Մասիսի կողմերը, ըրջելով հասավ մինչև Սել ծովի ափերը, հետո գնաց Գիլան, յեկավ Գետարեկ: Յեվ վորտեղ նա գնաց, աներ կառուցեց, գետերի վրա կապեց կամուրջներ, աղբյուրների առաջ քարե ավազաններ՝ մարդկանց և անասունների հսմար:

Սավվան նրան սովորեցրել եր, թե ի՞նչ կա գետնի խորքում, յեթե ջրերը սև ժանդ են դնում քարերի վրա և լեռան վրա խոտը փարթամ չի բարձրանում: Այն կաշվե պայուսակը, վոր մաշել եր հոր մեջը, վորդին ուսն առաջ ու ըրջեց յերկրից յերկիր և յերբեք ժանդ չնստեց պողպատե գործիքների վրա:

Վորդին այդ բոլոր վայրերում հորից ավելի յեռանդով վնասեց պղինձ, յերկաթ և ոնիքս-մարմար, վոսկի, և կվարց, և գրաֆիտ, և սրաքար: Նա փորում եր լեռան լանջերը և ձորերի հատակը, բարձրանում եր լերկ գաղաթները և խիում այն ժայռերին, փորոնք իրենց եյին քաշում կայծակի թրերը: Զրնդում

43

Եր և հ' ժայռը, և' հոր մոռւրձնը: Նա զննում եր ժայռի  
բեկորը և անսխալ վորոշում, թե ի՞նչ կա նրա խա-  
վար ընդերքում: Յերբեմն նա գտնում եր մաքուր  
յերկաթե շերտ, լեռան կողի վրա: Նա ինքն եր հա-  
նում ծանր մետաղը, վորից գյուղական դարբինները  
թափում եյին խոփ և ծեծում սուր գերանդի, յեր-  
բեմն փակում եր իր փորած հանքահավը, յերբ նկա-  
տում եր, վոր հանքը խորն ե քիչ են իր ուժերը:  
Այդպես տարիների ընթացքում նա սովորեց թափան-  
ցել լեռների խորքը, նայել հարյուրավոր մետր ցած  
և այնտեղ տեսնել ալաղի և խճի տակ թաղված  
պղինձը, և մարմարը, աև յերկաթը և գունավոր  
կվարցը:

— Լազր, հայրդ իսկապես գետի մեջ եր գցել իր  
դանակը...

— Գցել եր գետի մեջ...

— Իսկ գու գտա՞ր դանակը...

— Ցես գտա դանակը:

Յել Լազրը պատում եր հանքաքար վինտողների  
չին սովորությունը: Ազգյուրների ջրերի և գետերի  
մեջ նրանք նետում եյին յերկաթի կտոր և ժամանա-  
կի ընթացքում յերկաթի վրա նստում եր պղինձը,  
յեթե ջրի մութ ակունքներում պղինձաքարի շերտեր  
կան: Մի այլ ձևով նրանք վինտում են մարմարը, և  
առանձին ուշադրությամբ են զննում այն վայրերը,  
ուր առատությամբ թափված ե կուպրի նման սև և  
փայլուն «սատանի յեղունդը»:

— Իսկ գտա՞ր դու այն դանձերը, վորի մասին  
ասում եր քո հայրը՝ Սավա Սիվերոն:

Նա լուսմ է:

— Այդ գլույց ե... Բայց տես մեր գերեզմանա-

տունը... Այ իմ մոր սպիտակ մարմարը և հորս գե-  
րեզմանը: Մինչեւ այստեղ թուզում են մեր մեղունե-  
րը: Յել ինչ պակաս հարստություն և այն սարը:

Մկանուտ ձեռքը մեկնում ե դեպի դիմացի լե-  
ռան գաղաթը, վորտեղ ձյունի մաքուր փայլով շո-  
ղում են մարմարի վիթխարի քարերը և յերբ իջնում  
ե ամպը, թվում ե, թե մինչև յերկինք և հասնում  
սպիտակ մարմարը:

### 3.

Այս վայրը կոչվում ե «Վոսկե գահ»:

Կողը հարթավայր ե լեռնային թանձը խոտով:  
Կանաչը կարմրում ե, յերբ խոտերի մեջ բարձրանում  
ե կարմիր պուտը, կատույտ ե դանդածաղիկներից և  
սպիտակ՝ յերբ բացվում ե լեռնային մեխակը, կար-  
ծես մեկը ներկեր ե տարել և կանաչ մարդարետին-  
ների վրա անկարգ կաթկթել են ներկերը:

Այդպես և այդ հարթավայրը, յերկու կողմը  
բլուրներ, հետեւ բարձր լեռը. լեռան դիմաց անդըն-  
դախոր ձոր, վորտեղ աղմկում ե լեռնային մի անա-  
նուն ջուր: Յեթե լիներ մի հսկա և նստեր «Վոսկե  
գահ» հարթավայրին, նա թեերը կհեներ բլուրնե-  
րին, մեջքը այն բարձր լեռան և վոտքերը կկախեր  
խոր ձորի վրա:

Բայց մենք ժամերով գնում ենք «գահ» կանաչ-  
ների միջով. յերբեմն խանդարում ե խոտը, վոր  
հասնում ե մինչեւ մեր կուրծքը և յերբեմն ել քամուց  
ծովի նման ծփում ե բարձր կանաչը և քամին խում  
ե Լազրի խոսքերը:

... Գնացել ե նա գետի հոսանքին հակառակ և  
ուշադիր նայել ե ջրերին, նա հսկել ե մինչեւ դետեղ-

րի այն աղբյուրը, վորի ավազանների մեջ ընկած եր պղնձամպատ յերկաթը:

Գետի ջրի մեջ նա գտնում է մարմարի մի զարդանալի կտոր: Նա փշրում է քարը և տեսնում նրա կապույտ փայլը, այն հաղիկ նշմարելի յերակները և հաղարավոր վոսկեփայլ աստղիկները: Նա մտարեցում է, վոր գարնանը չափից ավելի բարձրացել եր գետը: Ուրեմն ձյունհալի ժամանակ, կամ գուցե գարնան սղոտոր հեղեղը լեռներում քերել է մի անհայտ լեռ և հեղեղը գետին է հանձնել այդ չնաշխարհիկ մարմարի կտորները:

Գնում է հոսանքի հակառակ մինչև գետի ակունքները՝ ցրված-վուլած խոր ձորերում, լեռների վրա, մինչև բարձր գաղաթների սառն աղբյուրները: Նա սպասում է մի տարի, նորից է հորդանում գետը և ավելի շատ են յերեսում այդ քարերը: Այդ տարին նա համոզվում է, վոր ձախ վտակներն են բերում քարը և յեռապատիկ համառությամբ չարունակում են մարմարի վորսը:

Յել գտնում է հանքավայրը մի ամայի լեռան գաղաթին, վորտեղ միայն ամառվա ամբոներին հընչում է հովվի սրինդը և ասլում է քարարծիվը:

Հետո շալակեց մարմարի նմուշները, իջավ այդ լեռներից և գնաց լեռշինարդ:

— Կային, վոր չեյին հավատում, թե մեր սարերում կա եղանա մարմարիոն... իսկ ասում եյի սա վո՞րտեղից է: Յես հո չեմ շինել:

Լեռն յելան պայթեցնողները և մարմարի վարպետները: Շատ անգամ պայթեց զինամիտը, մինչև ճանապարհը հասավ լեռան գաղաթը և այդ ճանապարհով յեղներն իջեցրին մարմարի առաջին քարը:

46

Զորելը լցվեց զվարթ աղմուկով:

Լազը, Յերկաթ Սավվայի արդեն ծերացած վորդին, դեռ թարմ ավյունով նրանց հետ եր վորոնք ճեղքում եյին լեռը, պայթեցնում Եյին ժայռերը և գետնի մութ ընդերքից դուրս հանում մարմարի ծանր քարերը:

Նա նայում է մինչև սայլերը ծածկվեն լեռան հետեւ, ապա նայում է ձորի մեջ ընկած իրենց գյուղին: Յել մարմարի վորսորդը դոհ է, վոր իր և աշխարհի համար գտավ այդ գանձը:

\*\*\*

Բարձում են որպա վերջին սայլերը:

Սայլապանները յերկաթե շղթաներով բարձրացնում են մի քար, վոր ծանր է հարյուր փթից: Յերեմն բարձում են և քար, վոր քաշում է յերկու տոնն: Ապա մռացնում են սայլը և մարմարը դանդաղ իջնում է սայլի վրա:

Ի՞նչ ահով են յեղները նայում այդ սպիտակ քարերին, վոր իջնում են շղթաների զրնգոցի և մարդկային աղմուկի մեջ:

Լազը ինչ վոր բան է ասում սայլապանին, ապա շոյում է քարը:

Նա քարին զարկում է մի տարորինակ գործիքով, վոր և մուրճ է, և կացին, և բրիչ... Զնդում է մուրճը և արձագանք է տալիս քարը:

— Յերկու հաղարից ավելի արժի:

Յես նայում եմ նրա գործիքին. նույնիսկ կարող ե սղոցել քարը, նայած վոր կողմից կհագցնես կոթը:

— Լազը, վո՞րտեղից է քեզ այս...

47

Իմ ձեռքին եւ Սավլա Սէղերոյի նշանավոր հիշտակը:

Լեռան կատարին սողում եւ ամպը և չողքն ընկանում եւ մարմարի ժայռերի վրա: Նրանց սպիտակության մեջ լողում եւ նույն ամպը: Հետզհետե խոնարհում եւ արեւ, զարթնում եւ լեռների յերեկոս: Թվում եւ թե ցածրանում ու յերկինքը և թափանցիկ ողի մեջ բոլորովին մոտ են յերեսում աստղերը:

Բայց աստղերից ավելի պայծառ թարթում են նոր տների ճրագները և ձորերը վողողվում են մարմարի կաթնագույն լույսով:

33.

—

## ԱՆՁՐԵՎԼ...

Մթին սարերի ամպերից, կապույտ ձյուներից և սառն աղբյուրների արկունքներից դլորդլոր իջնում և ջորագետը, գարնանը՝ հեղեղների աղմուկով, ամառվատապին՝ զով կոհակներով և աշնանը՝ դեղնակարմիր տերեներով, վոր հավաքում են ջրերը ձորեցանրում: Հետո ջրերի վրա, նուրբ արահետների վրա ծանրանում եւ ցուրտ մառախուղը և լուսցիների բարձր աշխարհում մաղում եւ ձյունը:

Տիրություն, ահ, լեռնային յերկրի յերկա՛ր ձմեռ...

Արգեն տերեաթափ են թղենիները: Անտառում յերեսում են հացենի ծառերը նարնջադույն տերեներով, կաղնիները՝ բաց զեղին և կարմիր տերեներով, տանձիները, վորոնց չուրջը չոր խաղալի վրա գիշերում եւ մի գաղան: Ծառից ընկնում են տերեները, ահալոր կանչում եւ կույր մոշահամը և բոլորովին մոտիկ, դեղնած սաղարթի մեջ փայտահարը կառւցով թմբկահարում եւ կեղեւ: Անտառում մառախուղ եւ, կաթում եւ խոնավությունը մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին: Մի խանգարված մատուռի առաջ զեռ միում եւ չորսան Սաքոյի կրակը: Յես զգում եմ վոչխարների՝ անձրեկց տաքացած բրդի հոտը: Հետո իբար եմ հավաքում կրակը և մոխիրների տակ կարդում զերեղմանաքարի

յերկաթագիրը՝ «Երեմիա սուրբ ծերունի»... Խշում  
են քարափի ուսուիները: Բարձրեցում բուք կա և լեռ-  
նային բազերը մառախուղի միջով իջնում են դեպի  
տաք ձորերը:

Ահա քարանձավը... Նստել ե վորսկան Զատիկն,  
վոտքերի առաջ յեղջերուն փոել ե բարակ վիզը և  
սառած աչքերով նայում է դորշ մշուշին: Քամուց  
ծփում ե վորսկանի սպիտակ միքուրը, նրա վոտքերի  
վրա բուսել ե մամուռը: Կարմիր մասուրներ կան  
մատներէ վրա: Նա նայում է լինչպես յեղջերուն,  
չփխես խեղճ աղերսով թէ՞ անբարբառ աղոթքով:  
Գուցե խարույկ ե յեղեյ նրա մոտ: Վառել ե չիրու-  
խը խարույկի կբակից, և գիշերվա ահից կուչ յեկած  
թուխ մանուկներին պատմել քարանձավներում քըր-  
քացող այսերի և մարգագող ալքերի հեքյաթը, յեր-  
կա՛ր, ինչպես յեռնային յերկրի ահավոր ձմեռը:

Գիշում ե ձորն անհայտ աղմուկից, դողում ե  
գետինը, դողում են ծառերը և տարափով տեղում  
աշնան անձքեկի ծանր կաթիլները.

Գիշում ե քարանձավիր և լսում եմ մի ձայն, վոր  
արձականքի այս հնչում ե մութ փչակից:

... ես խոր ձորերում

ես Ի չորս քսան տարիս լրացավ,  
վոչ մի խնդություն տեսա իմ որում,  
վոչ ել մի անգամ աչքս լիացավ:

Խշում են մասրիները, վոր բուսել են քարափի  
լանջին, վորոնց խառնվել են այն տեսիլք ծերունու  
մեռած մազերը: Հետո աղմկում ե ամբողջ անտառը,  
քամին ե շառաչում և հողմահալած մառախուղը կոր-  
չում ե փչակներում, մթին քարանձավներում: Կաղ-

նիների բաց դեղին սաղարթի միջից աշնան արեր  
լուսավորում ե փափուկ արահետները:

Խաղաղ խնդությամբ իջնում եմ գետափը:  
Վերևում քարանձավների առաջ, մնացին այն  
լուսերն ծերունիները, վորոնք ապրեցին «ամէն  
մեռնողին յերանի տալով», վոտքերի առաջ մի մեռած  
յեղջերու...

\*\*\*

Գետը:

Գետի վրա, պողպատյա լարերից կախված որոր-  
վում ե մի կամուրջ: Այն ափին բարձրացել ե հիդ-  
րոցենտրալի բաղմահարկ շենքը, վորի վիթխարի ա-  
պակիներն արտացոլում են լոռու ձորի ժայռերը,  
անտառը, ավերակ մատուռը և այն յերեք տունը,  
վոր ծվարել են քարափի գլխին:

Շենքի ներսը՝ այս ձորերին անծանոթ յեռուղե-  
սով խլրտում են մարդիկ, վորոնք հերոսական ջան-  
քերով: Կ դժվար զրկանքներով հաստատեցին լույսի  
այս ամրոցը: Ահա յերկաթակուռ բետոնի անկործան  
և անփոփոխ հունով, Զորագետի ջրերը բարձր ժայ-  
ռից իջնում են ծանր տուրբինների վրա: Ամէհէ թա-  
փով պտավում ե սյունը, հարյուրավոր մեքենաներ  
գարձ են տնում, ոփթամով դառնում և վերևի ընդար-  
ձակ դահլիճում գեներատորը յերկնում է հաղար-հա-  
դար կիլովտ:

Մեքենաների ժխորի մեջ լսում եմ տարիների  
համառ աշխատանքի պատմությունը.— «Յերեք ագ-  
րեգատ, յուրաքանչյուրը 10·500 ձիու ուժ... բացի  
այդ՝ մի պելլտոն ագրեգատ... ընդամենը 32 հազար  
ձիու ուժ: Ողային ֆիզերները տանում են այդ ուժը  
դեպի պղնձաձուլարանները, դեպի ցիանամիդի և

գրահիտի գործարանները, դեպի Ստեփանավան: Հետագայում մի զիծ կմիանա Քանաքեռի հիվոկայանին, իրար կմիանան Լենինականը, Յելենանը, և հիմք կդրվի Հայաստանի եներգետիկ հղոր հանգույցին»:

Զվարթ աղմկում են մեքենաները, և դժվար ելովում այդ պատմությունը: Բայց պատուհանից ներս և մտնում անտառի դաշլ բույրը և նոր ներկած վահանների հոռը:

Մեկը կանգնել եւ ամպերումհարի մարմարե տախտակների մոտ և ուշադրությամբ նայում եւ պղնձե սլաքների ընթացքին: Նոր յերեմն բաց պատուհանից նայում եւ դիմացի լեռներին, անտառին և այն յերեք տանը, վոր կուչ են յեկել քարափի դիմին:

Նրա կապույտ աչքերից, նիշար և բարձր հասուկից յերեռում եւ այդ լեռների մարդը, անբան հովիլների շառավիղը՝ լոռեցի բանվորը: Վոչ ահ կա սըստում, վոչ խոնարհ վախ աստծուց, թալաղից, չարքից ու չարչուց:

Լոռու ձորում կնոտի ձմեռը և ծմակներում կվոռնա քաղցած դազանը, հոսոտելով նոր կհասնի մինչեւ քարափի յեղը և ահից հետ կդառնա, յերր տեսնի լույսերով վողողված ձորը:

Զմուն զիշերը լուսավոր դաշլիճում մարդը կլսի մեքենաների զվարթ աղմուկը, ապա նոր ճանապարհներով կգառնա տուն և իր թուխ մանուկներին կատամի, վորպես մի առասպել, այն ժամանակները, յերբ քար ու քարափների վրայով, մեջքը կքած, մեջքին ծանր րեռ, բարձրանում եր լոռեցին իր գյուղը՝ խավարի ու աղքատության մազիներում: Այժմամանակները, յերբ «մի տուն լիքը մանուկներ» առ եյին լոռում և բուքի վոռնոցը, և պարտքատիրո՞ց

վոտնաձայնը... Ապա կանցնի նորող որերի պատմությանը, յերբ լուռը ձորում մի ինչն Զատի սպանեց թափագին և «զակոնը» նրան քշեց Սէբիր: Կավանդի և հերոսական նոյեմբերը, վորպես նոր պատմության սկզբը, կպատմի և նքանց մասին, վորոնք այս ամայի ձորում քարձրացրին լույսի առաջին ամրցը...

... Դուրսը մաղում եր բարակ անձրև ջրերի վրա, արահետների վրա և դեղնակարմիլ անտառի վրա...

Այն կապուտաչյա լոռեցին մերթ նայում եր պղնձե ոլաքներին և մերթ արահետին, վորով մի որ իջավ քարափի դիմին ծվարած տներից և այստեղ, այս նոր ամբոցի կառուցման հետ, նրա ներսն ամբացավ մի նոր հավատ, նոր բարբառ...

\*\*\*

Յես նայում եմ նրան և հիշում իմ յերկրի հին պատմությունը:

Քարերն ու մազաղաթներն ալանդում են նրա քաղաքների կործանումը և սուր, և գաղթ:

Ինչպես մի յեղեգն՝ նա խոնարհել և զլւիսը հողմերի առաջ և խաղաղության ժամին նորից հանել: Նա սարսափահար վախել և իր գյուղերից, ինչպես նախերը հրդեհվող անտառից, ապա տուն և շինել քարափների վրա և անձրեախառն քամին ծեծել և նրա հոգաշեն խրճիթը:

Մեր յերկը ժայռերի վրա հաղթողները սնապարծ վոճով փորագրել են ավարառության և կողսպուտի պատմություններ, իսկ խավար խուցերում

պղասմագիրը հորինել և նույնքան սնամեջ առասպել-  
ներ հին փառքի մասին:

Ռամիկն անմոռւնչ պառկել և խանի, թավագի և  
սպիտակ ցարի մտբակի տակ, յերեմն ըմբռատացել,  
վորպեսդի մյուս որն ապավինի իր տիսուր յերգերին  
և նորից քաշի հին լուծը: Նա հերկել և ուրիշի հողը:  
սերմել և արյուն-քրտինք, իսկ առյուծի բաժին առել  
և ուսը, վանքը և ոռուբլու արքան:

Նրա գորշ հյուզերի վրա յերկինքը մաղել և  
արտմության անձրել:

Յես նայում եմ այս նորոգ մարդու աչքերին և  
կարդում նոր պատմությունը: Դեռ ինչպիսի շենքեր  
պիտի բարձրանան մեր լեռների յանջերին և ձորե-  
ռում, ինչքան քաղաքներ պիտի հառնեն տափարակ-  
ների վրա և դվարթաձայն հնչեն կառուցողների նոր  
յերգերը:

Յերկը և մարդկանց վրա, հերկած հողերի վրա,  
իջնում և աշնան բարեբեր անձրել...;

32.

## ՄԻ ԱՆԳՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐ 25-ԻՆ...

«Ավրորա»-ն խարիսխ եր ձգել Բալտիկ դործա-  
րանի առաջ: Ավելի հեռուն «Խաղսրառար պավել»  
հածանալին եր, նրա մոտ՝ նշանավոր «Կիոլան»,  
վորտեղ հուլիսյան որերին Ցենտրոբալտիկ շտաբն եր  
և ապա, կայմերի մի ամբողջ անտառ որորվաւմ եր  
գործ-կապարագույն ծովի վրա:

Ստեֆան Բորգան՝ «Ավրորա»-ի ծերունի նա-  
վաստին, վախտայի հերթապահն եր. նա ծծում եր  
ծխամործը և անշարժ նայում քաղաքի կողմը: Արև  
եր, հյուսիսի ստոն արև, վորի սպիտակ շողերը հըր-  
դեհել եյին իսամակի տաճարի գմբեթը: Տախտա-  
կամածի պղնձե ճաղերը փայլում եյին արեից:

Վախտայի կամբջակից նա դիտում եր քաղաքը:  
Փողոցներում սովորական շարժում եր. կամուրջների  
վրայով անցնում եյին տրամվայներ, ավտոներ: Զու-  
րոնցի յերկու նավալվար, հասարակ նավակները տա-  
կառներով բարձած հանդարտ թիավարում եյին:  
Յերեմն յերեսում եյին փոքրաթիվ գորսմասեր, վոր  
անհայտ եր, թե ո՞ւր եյին գնում: Կողակների մի  
ևսկադրոն անցավ արքայական կամուրջի վրայով:  
Հեռվեց նկատելի յեր նբանց թրերի փայլը: Յեկ  
նույնիսկ նրանց յերդը հին եր, կարծես Պիտերում  
վոչինչ չեր փոխվել: Ամեն ինչ առաջգանն եր, ինչ-  
պես նեկան, ինչպես նրա գրանիտյա ափերը:

Բորգան շըջկեց գեղի «իմպերատոր Պավել» նաւվը և նրա դեմքի վրա չողաց ժպիտը: Ահա կայմերից բարձր ծածանվում և կարմիր դրուը, առաջին կարմիր դրուը, վոր բարձրացրին Բալտիկ՝ ծովի նավաստիները: Յել Բորգան հիշեց այն որը, յերբ լողացող սառույցները ծովի խորքը տարան միջան Բուլիչի արյունոտ դիակը: Միջմանը հայհոյել եր կարմիր դրուի առաջին պահակին, պահակը կը արակել եր նրա վրա և նրա ծանր մալմինն ընկել եր բորտից ներքեւ:

Վախտայի կամըջակի վրա ծանր քայլում եր Ստեֆան Բորգան, ծծում եր ծիսամորմը և քթի տակ յերգում եստոնական անուրախ «Ճամամա»-ն: Ներքեվ տախտակամածի վրա յեռում եր նավաստիների սովորական առողջան: Վոմանը ավազով և ծանր խողանակով ըլվանում եյին տախտակամածը, մյուսները՝ խաղում եյին վոսկորներով, վոմանը թնդանոթների շղթաների մոտ կանգնած խոսում եյին:

— Ասում են արդեն տպում են հայտարարություններ, վոր իշխանությունը մեղ և անցնում:

— Իսկ Կերենսկին Փրոնտից կողակներ և կանչել, յերկու դիվիզիա...

— Զեռքերը կարճ են... Զի հասնի:

— Ախ, յեթե մեղ ուղարկելին Զմեռային պատմի դեմ, յես դիտեյի ի՞նչ կանեյի...

— Ի՞նչ կանեյիր:

— Յես... Կանանց բատալիոնից տասը հոգու գերի կառնեյի և, հասկանում ես... Մանավանդայն հաստիկ Ֆենիային:

Նավաստիները հրապացին: Նույնիսկ Բորգան, վոր կամըջակից լուսմ եր նրանց զրույցը, ժպտաց: Նա կամեցալ միջամտել խոսակցության, բայց նկա-

տեց ծանոթ ավտոն, վոր շըջկեց գեղի ափը, ուղիղ «Ավրորա»-յի դիմաց:

— Գալիս են, — կանչեց նա և տքապը հանդարտ նստեց դրանիտի վրա:

Յեկողները Ռազմահեղափոխական կոմիտեյի և կարմիր նավատորմիոյի ներկայացուցիչներն եյին:

\*\*\*

Թանձր ծուխը լցովել եր կամարակապ սենյակը, վոր նման եր գետնահարկ խուցի: Ճրագը ծխի մեջ ավելի աղոտ եր լուսավորում և նրանք, վորոնք կռացել եյին Պետրոգրադի քարտեղի վրա, ստիլված եյին գործածել նաև մոմ և լուցի, ավելի պարզ տեսնելու փողոցները, կառուցվող բարբկադները, կամուրջները, վոր հարկավոր եր ըստ կարիքի բարձրացնել և վերջապես շենքերը՝ փոստի, հեռագրատան, բանկերի, մինիստրությունների և մանավանդ զորանոցները, վոր պետք եր անհապաղ դրավել:

— Ուրեմն նորից եմ հիշեցնում Յեկայի կարգադրությունը, — խոպոտ ասաց Պարվիլսկին, — առանց իունձապի, առանց յերկուողի... Մենք պիտի բանտարկենք ժամանակայոր կառավարությունը, Կերենսկուն, գլխավոր չտարը... Պետք և դրավենք Զմեռային պալատը, այնտեղ են նրանք բոլորը: Պարզ ե...

— Պարզ ե, — ողատասխանեցին այս ու այն կողմից:

— Ծնկեր Պարվիլսկի, գիշերապահները կարող են խարույկներ վառել, — հարցը մեկը:

— Դու ել ինչի՞ մասին ես հարցնում, — կշտամբեցին նրան:

— Հանդա՛րտ, ընկերներ: Ժամանակը թանգ է: Խարույկ չվառեք, վորովհետեւ տաքանալու համար կրոկի մոտ կհավաքվեն զանազան քաղքենիներ, իսկ այդ հարկավոր չե:

Անընդհատ ներս ու դուրս եյին անում դնդացիրի ժապավեններ կապած և ձեռքի նոնակներով զինված նավաստիներ, բանվորներ, կարմիր գվարդիականներ: Նրանք ծանրախոհ մտնում եյին այս և այն սենյակը, վորոնք միանման եյին, ինչպես խուցեր և հաղորդում եյին լուրեր, ստանում հրահանդներ և զենք: Բակում անընդհատ ազմկում եյին մոտոցիկլետներ, ավտոներ. սուրհանդակների ձիերը դոփում եյին փողոցներում:

Գալիս եյին գորամասերի սպատիլիրակներ, վորոնք հայտնում եյին իրենց կամքը՝ կովելու ապստամբող բանվորների հետ կողք կողքի: Վոմանք միայն չեղուքություն եյին խոստանում: Նրանք հեռանում եյին ընկճված և իրենց հետ դեպի զորանոցներն եյին տանում լուրեր ապստամբության մասին: Յերեմն գիշերային հետախուրդները տեղեկություններ եյին բերում քաղաքի շրջակայքում թշնամու կասկածելի դորաշարժերի մասին:

— Իսկույն ուժեղացնել հսկողությունը կամուրջների վրա... Կարմիր գվարդիականներին ուղարկել յերկաթուղու կայարանները... Զինաթափել «Աստորիայի» սպաներին: Դիմադրության դեպքում անխնա յեղեք: Բնկե՛ր Սոկըն, ստուդեցեք ժամանակը:

— Տանմեկից տաս սպակաս:

Ցեղ յերկուսն ել նայեցին ժամացույցներին:

— Տանմեկուսին ինձ զեկուցեք, վոր «Աստորիա»-ն մեղ այլևս չել խանդարի: Շտա՛պ:

Խավար միջանցքների քարերի վրա լսվեց սապոգների մետաղյա ձայն, ապա արմկեցին յերեք բեռնատար մեքենա և զինված նավաստիների խմբերը սլացան գեպի «Աստորիա»:

— Ուրեմն ողակել նեվայից մինչեւ Մարտյան դաշտը, ապա Մոյկայից մինչև Մարինակի պալատը: Հրետանին խիռում և պալատի հրապարակի ուղղությամբ: Գրեցի՞ր, Վասյա... Հետո զրահապատները...

Բայց հանկարծ ներս մտավ մեկը, վորին յերկու ժամ առաջ ուղարկել եյին շտապ հանձնարարության:

— Նրանք փակեցին դարպանները... Բայց պատուհանների վրա զնդացիրներ կան: Սպասում են կողակների յերկու եսկադրոններ:

— Փակել Միլիոննի փողոցը և նեվայի գետափը մինչև կամուրջ: Դաղաբեցնել տրամվայների յերթեւկեկությունն այդ փողոցներով: Զինաթափել եսկադրոնները, յեթե մոտենան կամուրջին: Ովքե՞ր են «Ավրորա»-յի հետ կապ պահողները:

— Երկա յեն, — վոտքի յերան յերեք յերետասարդ և մի ծեր նավաստի Ստեֆան Բորգան:

— Կրեյսերը մոտեցնել կամրջին... Հետեւ աղուանչանին և անապաղ կրակել Զմեռային սպալատի կողմը: Քսան նավաստի ուղարկել ընկեր Անտոնովին՝ պալատի վրա արշավելու...

— Есть, — ասաց Բորգան, առաջին անգամ՝ առանց կապիտանի: Դուն մոտ մեկն արագ նշանակեց

նրանց ազգամուշները և տրված հանձնարարությունը:

Մթին պալատների առջեվով անխոս դնում եյին չորս նավաստի: Յուրաքանչյուր ծովից փչում եր խոնավու սառը քամի. փողոցներում հատ ու կենտ լապտերներն որորվում եյին և նրանց հետ որորվում եյին տների մութ առվերները: Կորչ եյին դարսասները, պատուհանների փեղիերը և ձայն չեր լսվում բարձր հարկերից: Յերեմն նրանք հանդիպում եյին դիմումագիտականների, վարոնք նշանաբանից հետո թողնում եյին նրանց,

Փոթորկիւ եր ծովը: Վիթխարի ալիքները արշավում եյին Նեղայի հոսանքին հակառակ, գետն ուղղում եր, խոնում ափերի գրանիտին: «Ովրորա»-ն բոլոր լույսերը հանգցրել և զգույշ լողում եր դեպի արքայական կամուրջը: Միաժամանակ նավաստիները մթնում հանում եյին թնդանոթների պղնձե յերախակաները և նրանց պղնձատյա փողերը դարձնում դեպի Զմեռային պարատը...

\*\*\*

Առաջին զբահապատները գրոհեցին Սենատի հրապարակից: Նույն ժամին, տաճարի առաջ գաշտային հրետանին հրաման ստացավ կարճ ճանապարհով միանալ պուտիլովցիների զորամասերին: Ապստամբ զինվորների զորայուներն արշավում եյին Մանեժի և ինժեներական դպյակի կողմից: Կարմիր գվարդիականները Ալեքսանդրյան այլուց զնդակում եյին Զմեռային պայտատի գարպատները:

Պալատի ներսից և հարևան շենքերի կտուրներից գնդացիրային կրակով պատասխանում եյին յունկեր-

ները: Գնդակները շառաչով դիպչում եյին ցուցանակների թիթեղներին, մայթի քարերին և աղմկով փշրում հաստ ապակիները:

Վախեցած քաղքենիները փակել եյին դուռ ու լուսամուտ, նրանց հետեւ շարել բարձեր, սեղաններ գրքեր: Յւկ դողում եյին ահավոր յերկյուղից, դողում եյին, անիծում և աղոթում:

Մոտ յերեք-չորս հարյուր հոգու մի բազմություն սպիտակ գրութ բոնած մոտեցավ կարմիր դվարդիականներին դիրքերին:

— Կանդնեցե՛ք, — և դրահավոր մեքենան դանդաղ մոտեցավ:

— Ճանապարհութ, — բազմությունից բղավեցին մի քանիսը: Նրանց մեջ կանացի մի ձայն կանչեց ամենքից բարձր:

— Մենք Պետրոգրադի Դումայի և հասարակական հատապությունների ներկայացուցիչներն ենք և դնում ենք խնդրելու ժամանակավոր կառավարության, վոր դադարեցնի այս արյունհեղությունը:

— Զկա՛ ժամանակավոր կառավարություն, նատակալված ե: Կա՛ հեղափոխություն...

— Ճանապարհութ մեղ:

— Հեռացեք կամուրջից, թե չե կրակում եմ:

— Ավաղակներ, հայրենիքի դավաճաններ, հիստերիկ ճիշով բղավեց այն կինը, վոր կոմսուհի Պանինան եր...

— Հեռացեք կամուրջից, — և զնդացիրը կրակեց ողի մեջ:

— Հեռանանք, պարուններ... Տեղի տանք բոնության ուժին և աղոթենք աստծուն մայր Ռուսիայի

Փրկության համար, — յերկյուղած ձայնով ասաց  
 դավանության մինիստր Կարտաշելը:  
 Բազմությունը հետ նահանջեց:  
 — Կանգնի՛ր, — բղավեց յերխուսարդ Սահակը և  
 ուշեց հացանը: Մի ավտո կանգնեց:  
 — Իչե՞ք ցած...  
 — Սա ի՞նչ անկարգություն է, — զայրացավ ավ-  
 տոյի մեջ նստած պորտփելով մարդը:  
 — Դուք պետք ե վոտքով գնաք Սմոյլնի, — հան-  
 դարս պատասխանեց պահակը: — Իսկ մեքենան  
 կմնա...  
 — Գիտե՞ք յես ով եմ, — ձայնը բարձրացրեց  
 նա, — յես մինիստր Պրոկոպովիչն եմ... ինչպե՞ս եք  
 հանդիպում ձեռք բարձրացնել կառավարության ան-  
 դամի վրա: Սա անկարգություն է: Զեր ազգանո՞ւնը,  
 պարոն, — և գրանից հանեց բլոկ-նոտը:  
 — Գնացեք Սմոյլնի, այսոեղ ձեզ կատեն...  
 Յել մինիստր Պրոկոպովիչը, վորակ կալանա-  
 վոր, վոտքով գնաց Սմոյլնի:  
 Ժամը յերեքից անց բոլոր զորամասերը հրաման  
 ստացան:  
 — Ուժեղացրեք գրոհը, գրավեցեք պալատը...  
 Շուտով իլիշը յելույթ կունենա Խորհուրդում:  
 Բանտարկվածներին և գերիներին ուղարկել Սմոյլնի:  
 Զմեռային պալատը գրավող առաջին կոմիսարին  
 հրամայում եմ անմիջապես ներսը սահմանել խիստ  
 կարգ և առանց խուզարկության վոչ մոքի դուրս  
 չժողնել:

Հրամանից հինգ րոպե հետո հանկարծ վորոտա-  
 ցին «Ավորա»-յի թնդանոթները՝ մեկ յերկու, ապա  
 վորոտացին Պետրոպավլովկայի կողմից: Դաշտային

հրետանին, վոր արդեն մնացել եր պուտիլովցինե-  
 րին, հրապարակից զարկեց արքաների ձմեռային  
 տան դարպաններին: Լովեց մի հուժկու ուռուա և բո-  
 լոր փողոցներից արշավեց զինված բազմությունը:  
 Զմեռային պալատում գնդացիրները լուցին:

Նավաստիների և կարմիր գլանդիականների մի  
 զորացուն խիզախ գրոհով մտավ բակը և ոռութերը  
 պատրաստ բարձրացավ մարմարյա սանդուխներով:  
 Առաջին գրոհայինների մեջ եյին «Ավորա»-յից  
 տանիոթ նարաստի, վորոնց թվում ծերունի Ստե-  
 ֆան Բորգան:

Գրոհողները մեծ յեռանդով վնտառում եյին Կե-  
 րենսկուն: Արդեն բանտարկել եյին ժամանակավոր  
 կառավարության անդամներին, զինաթափ եյին ա-  
 րել յունկերներին և չարքի եյին կանգնեցնում նրանց  
 պալատից դուռս տանելու, — սակայն բանվորների և  
 նավաստիների առանձին խմբեր Զմեռային պալատի  
 բազմաթիվ սենյակներում և ներքնահարկում դեռևս  
 փնտուռ եյին անփառունակ «Բնոնապարտին».

Մեկը հանկարծ ներքեցից կանչեց.

— Բոնել ենք, բոնել ենք...

Մի քանի նավաստիներ Ստեֆան Բորգայի հետ  
 միասին ներքնահարկի մութ միջանցքում բանտարկել  
 եյին յերկու հոգու ու վերաբերների մեջ փաթաթ-  
 ված, — և վողերը վաճառում եյին, դղրդացնելով  
 կամարները:

Կոմիսարը նրանցից վկայական պահանջեց:

Ծերունի նավաստու սուր աչքը սև վերաբերյալ  
 տակ տեսավ եպուետի վոսկե յերկու: Նա հետ քաշեց  
 վերաբերյալ ոճիքը: Նույն բոպեյին կոմիսարը կար-  
 դաց նրա վկայականը.

— Գեներալ մայոր Բագրատունի, Պետրոգրադի  
մարդի շտաբի պետ...

Ստեփան Բորգան սովորեց գեներալի բրաունինքը  
և վուկեղոն եպոլետները:

Իսկ դրառում, Զմեռային պալատի բակում, լըս-  
վում եր հոմերոսյան քրքիջ: Հրհոռում եր զինված  
բաղմությունը, ծիծաղում եյին և սրախոսում:

Զինաթափ եյին արել Կերենսկու վերջին հույսը՝  
կանանց բատալիոնը: Նրանց շարքի եյին կանգնեց-  
րել և սպասում եյին հրամանի, վորհե տեղ տանե-  
լու:

— Եռու, Ֆենյա, հանիք բրյուկդ:

— Իսկ են այստայսն նրանց հրամանատարն ե:

— Այս դուք Կերենսկու հարսներ... Գնանք մեր  
զորանոցները...

Կոմիսարը կարգադրեց առանձնացնել կանանց  
բատալիոնը: Ապա հարցրեց:

— Ո՞ւր ուղարկեմ ձեզ...

— Ընկեր կոմիսար, նրանց ուղարկիր իրենց  
կազմարման... Այսուեղ նրանք սնդուկների մեջ կու-  
նենան իրենց դեյրաներն ու կոֆտաները: Կհագնեն և  
կկորչեն տները,— միջամտեց Բորգան:

Մեկը բղավեց.

— Պատգամավորները դեպի Խորհուրդների շեն-  
քը...

Ստեփան Բորգան հեղնանքով նայեց գերի ընկած  
կանանց և հեռացավ: Իսկ մյուս նախատին չղիմա-  
ցավ՝ գայթակղության և ծածուկ կոմիտեց Ձենյայի  
հաստիկ թեր...



Պետրոգրադի Խորհրդի նիստի ժամանակ անսպա-  
սելի կերպով ներս մտավ գորչ վերաբերույթ մի  
մարդ: Նա մի վայրկյան նայեց վոգեորությունից  
հուզված պատգամավորների բազմությանը, վորոնց  
վրա թանձր ծուլսը ծփում եր և որորվում եյին ջա-  
հերի վուկե ժանյակները: Գորչ վերաբերույթ մար-  
դը նայեց մի վայրկյան, ապա հաստատ քայլերով  
մոտեցավ ամբիոնին:

Դահլիճում աղմուկը դադարեց:

— Ընկերներ, — զրնդաց նրա ձայնը, — բանվո-  
րական և գյուղացիական հեղափոխությունը, վորի  
անհրաժեշտության մասին միշտ առում եյին բուշ  
վիկները, կատարվեց... Ճնշված մասսաներն իրենք  
են ստեղծում իրենց իշխանությունը... Այսորվանից  
սկսվում ե պատմության մի նոր ըրջան...

Դահլիճը դղրդաց ծափերի վորոտից և նույն  
ըովելին Ծովային շտաբի գավլիթից, «Ալբորա»  
կրեյսերից և Պետրոսավլովկայի հեռուներից. վողու-  
նեցին թնդանոթները, զործարանների հաղարավոր  
սուլիչներն ահեղազոչ արձագանքեցին և արձագան-  
քը, վորպես նոր պատզամ սլացավ քաղաքից քաղաք,  
աշխարհից աշխարհ...

— Այսորվանից ամբողջ իշխանությունը պատ-  
կանում է բանվորների, զինվորների և գյուղացինե-  
րի խորհուրդներին...

Խոսում եր Լենինը:

## ՔԵՌԻ ԴԱՎՈՒՆ

Վոչ քու մասին, չայկ, վոչ Ալեքը և վոչ ողակալար Մարինայի և վոչ ել նույնիսկ Մխոյի «թռուցիկ բարեգագի» տղաների մասին և, վոր ահա գրում եմ, այն մարդու մասին, վորը խրճիթում խոնված բազմության մեջ իմ աշքին չեր ընկնում, մինչև ներս վազեր դոմի պահակը և լեղապատառ կանչեր.

— Քեռի Դավոն, քեռի Դավոն, են անիրավ «խըմբապետի» կապ փրթավ. յելիր, թէ չե, Արար ենոր փոր կթափա:

Յելավ միջահասակ և ամրակազմ մի մարդ, մեկը նրանցից, վորոնք լրացնում են քառասունը, հետեւ են թողնում հիսունը և նույնիսկ վաթսունին հասնելով չեն փոխում իրենց քայլվածքը, դեմքի արտահայտությունը և առհասարակ իրենց: Նրանք ունենում են իիստ սե և ձյունի նման սպիտակ մազեր, և սեն ու սպիտակն իրար խառնված, նրանք ապրում են գեռ յերկար, և այն տարիքում, յերբ ուրիշ ծերունիներն ունենում են զառամյալ մարմին և հենվում են ցուպին, — այլպիսիները դեռ առույդ են և ունեն արթուն միտք:

Յելավ այդ ամրակազմ մարդը, վորն եր ինքը՝ քեռի Դավոն: Նրա հետեւից դուրս յեկավ նաև Մխոն, վորին անվանում են «Կես կոիվ», վորովհետեւ նա

հանդարստ չի կարողանում խոսել և նույնիսկ, յերբ ժողովում իսոսք ե առնում, նույնիսկ այդ ժամանակ թնգում ե նրա ահագնաղղորդ ձայնը և թվում ե, թե վոռում ե մի ամբողջ լեռ: Յես ևս դուրս յեկավ «զկնի», ինչպես ասում են այդ գյուղում: «Կես կոիվ» Մխոն արգեն վորոտալով պանում եր, և լսեի յեր, թէ ինչպես նա անարդում եր ինչ վոր լոդը Միջանի, նրան անվանելով «կուլակի թիկնացու», «կոլմողի տիզ» և այլ այսպիսի խոսքեր:

Իսկ քեռի Դավոն գնում եր միջահասակ մարդու սովորական քայլերով, այն վարժ քայլքով, վորով այդպիսի մարդիկ լուսաբացից մինչև որ-կեսոր կարող են կտրել լեռներ և ձորեր և նոր միայն նեղանալով չոպից և վո՞չ հոդնածությունից՝ պառկել մի թփի սովորում: Դժվար չեր գուշակել, վոր «Կես կոիվ» Մխոն պիտի փոթորիկ գցեր և ավելի բարձր վորոտար լոդըների, ծուլերի, ավարաների և այլ այլպիսի մարդկանց հասցեյին և հենց այդ ժամանակ պիտի վրա հասներ քեռի Դավոն և լուռ ու մունջ դորժ աներ:

Պատահել 'եր ահա թե ինչ:

«Խմբապետը», վոր մի կիսափելակար յերիտասարդ յուլ եր, անպատիվ համարելով յեզների շարքը զատկել և կամ գայթակղած այն աղնիլ և ընտիր կերով, վոր ախոռապանները լցրել ելին ձիերի առաջ, կարել եր վզի կապը և հարբած արջի նման ծառս յեղել կոլխոզի ընդարձակ գոմում, վորից և վախեցած պահակը վազել եր հավարի: Զիերից վոչ մեկը նրան մոտ չեր թողնում, իսկ Արարը, չքնաղ մի նժույգ, — դեռ շարունակում եր զայրագին վրընջալ, գոփելով դոմի սալ քարերը:

Յերբ քեռի Դավին ներս մտավ, տեսավ հետեւյալ  
պատկերը: Գոմի մյուս ծայրին, կիսամութիւն մեջ  
ցուլը կռացրել եր վիզր և բոռում եր. մութիւնից  
բոցիլտում եյին նրա արնախառն աչքերը: «Կես կոփիվ»  
Միսն դռան մոտ աղմկում եր ավելի բարձր, քան  
վրնջում եր Արարը: Յեզների և ձիերի յերկար շար-  
քերը, վորոնց վերջը չեր յերկում, հանդարու խըժ-  
ուում եյին կերը: Միայն մի յերխասարդ քուռակ,  
վորին ավելի կլայելեր սալել՝ որինակ առնելով. հա-  
սակավոր և պատկառելի ձիերից — ջղային անհան-  
գստությամբ ցցել եր ականջները և ուղում եր ցույց  
տալ, վոր ինքն ևս բաժանում է յերելի նժույգ՝ Ա-  
րարի զայրութը: Իսկ յեղներից և վոչ մեկը վորեն  
կերպ ցույց չեր տալիս իր վերաբերմունքը և նույն-  
պես կարելի յէ ասել, վոր նրանք ատելությամբ եյին  
լցված դեպի «Խմբապետը», վորին որերից մի որ  
պիտի ամորձատեյին. և նա ևս պիտի դառնար չարքաշ  
յեղ:

Քեռի Դավին, առանց վոխելու քայլերի ովթմը,  
անցավ գոմի յերկայնքով և ուղղակի մոտեցալ ցու-  
լին: Նույնիսկ «Կես կոփիվ» Միսն սարսափից լոեց և  
այլս չվրնջաց Արարը: Քեռի Դավին բռնեց «Խմբա-  
պետի» ականջներից և առաջ յեկար հետեւյալ ցուլը:  
Ապա նա ցուլին հրեց յերկու պառակ յեղների արան-  
քը, առավ ճիւլ խոտից հյուսված թելի կծիկը, գրր-  
պանից հանեց կեմբարը և դարմանալի արագությամբ  
ու ավելի զարմանալի վարպետությամբ վոլորեց  
այնպիսի ամուր կապ, վոր հուր-հավիտյան «Խմբա-  
պետը» չեր կարող քանդել: Նա ցուլին կապեց յեր-  
կաթե սեպից, և միայն այդ ժամանակ նորից «իո-  
թորիկ փրթավ» Միսն ու դուրս դնաց:

Այդ ժամանակ քեռի Դավին վոչ մի բառ չար-  
տասանեց և միայն, յերբ կապեց ցուլը, գրպանից  
հանեց ծխախոտի տուփը և հաստ մատներով փաթա-  
թեց ծխախոտը և ապա, այն ել կես հեղնանքով, ա-  
սաց գոմի պահակին.

— Հարա հորի՞ ժողովքին կըսեյիր ընցել և քեռի  
Դավոյի ժամանակ, — և թիթե զարկեց նրա մեջքին. —  
սովորի, տղաս, սովորի...

Ապա մոտեցավ մի ծանր ձիու, վորն ահագին  
աղմուկով կըճտացնում եր ատամները, կարծես գա-  
րու հատիկները վշրվում եյին ջրազացի քարերի  
տակ, — և շոյեց ձիու բաշը:

— Քրտնած և ձին, տղա, — և տսաց նաև, վոր  
գոմն արդեն նեղ և, հարկավոր և ձիերի նոր գոմ կա-  
ռուցել:

— Քեռի Դավին, դու ա՞յս բրիգագի մեջ ես:

— Զե, յես դաշտավար եմ:

— Հապա ինչո՞ւ յեկար դոմը:

— Զե՞ ես ել մերն ե, — և ձեռքը մեկնեց ձիերի  
ու յեղների կողմը. — բոլոր իմ ե:

Քեռի Դավին դնաց.

Գոմի պահակը, վորն իսկույն թողեց բարբառը,  
պատմեց այն ճանապարհի մասին, վորով նրանք ըն-  
թացել են, սկզբում՝ չորս տարի առաջ՝ միայն մի յեղ և վո-  
ներկու տուն, վորոնք ունեյին միայն մի յեղ և վո-  
ներից անվանում եյին «Հուտի խումբ»: Ահա այս դոմը և նրա բակը հոչակված իջևան եր  
Շարուրից և Որդուրաթից յեկող քարավանների հա-  
մար: Այժմ այդ ծածկերի տակ հանդչում են մեքե-  
նաները և մի ամբողջ դումակ: Նրանք եյին տասներ-  
կու տուն և ունեյին միայն մի յեղ. առաջին հիմնա-

Դերները մեջտեղ գրին ինչ վոր ունեյին՝ վերջին  
պարկ դարին ու նույնիսկ մշուր ձավարը փոխեցին  
գարու հետ և համայնական առաջին դաշտում սերմ-  
նացանը լի բուռով շաղեց սերմը։ Հետո յերեսունից  
անցան և այս ճմեռ նրանք արդեն հարյուր մից են,  
և հիմնադիրները պարձանքով նայում են հետ՝ չորս  
մեծ տարիներին։

Պահակը պատմում եր այդ տարիների մասին, և  
այդ թվում եր մի պարզ պատմություն։ Լեռ չի փըլ-  
վել, չի յեղել ամեհի պատերազմ, հրաշք չի յեղել,  
և միայն քրտինք ին թափել հողի մշակները և  
նրանք, վորոնք ունեյին միայն մի յեղ, այժմ իրենց  
վաստակով տեր են դարձել յերամակի և նախիրի,  
սայլաշարքի և մեքենաների, ունեն ցորեն և գարի,  
կանայք կով են կլթում, իսկ նաղարաչի Զոլոն նրանց  
դիարձացնում ե և թնդում ե «գյունդը»։ Այդ թվում  
եր մի պարզ պատմություն, և դժվար է հաղորդել  
այն ներքին ուրախությունը, վորով համակված եր  
այդ յերիտասարդը, ինչպես այն մարդը, զոր իսկո-  
ճության, հոգու այլասեռման և ծայր չքավորու-  
թյան անդունդի ափից անդարձ անցել և մի ուրիշ  
ափ և ուրախությունից կոխում և այն հողը, վոր  
իրենն եր, բայց իրեն չեր կերակրում, տեսնում և  
նույնպիսի մի ճմեռ, յերբ լեռները ճյունոտ են, ահա  
դարձյալ Արագի ափից բարձրանում ե տաք գոլոր-  
չի, բայց իր գուանն այլմա չի չքել սովոր ահը և նրա  
վաղը չի յերեռում վորպես անողնական կրակ մթագ-  
նած բուքի մեջ, այլ բացվում ե վորպես նորոգ գար-  
նան առավոտ։

Խրճիթում հավաքվածների խորհրդակցությունն  
ավելի նման եր պարզ զրույցի, բայց այդ հասարակ

խոսքերը վորոշում եյին հարյուրավոր մարդկանց ա-  
նելիքն ամբողջ տարվա ընթացքում։ Վորոշում եյին  
այս տարվա նորմաները և միաժամանակ ուրվագծում  
եյին կոլեկտիվի վողջ արտադրության պլանը։ Նըս-  
տել եյին՝ ով ինչպես ուղում եր, և միայն նրանք  
եյին սեղանի մոտ, վորոնք գրում եյին։ Նույնիսկ  
մեկը խրճիթում զնում գալիս եր և յերբեմն բարձ-  
րացնում եր գլուխը, այդ ժամանակ նա հայտնում եր  
իր գիտողությունը, և նրան ևս լսում եյին այնպես,  
ինչպես մյուսներին, վորոնցից վոմանք նստել եյին  
պատի տակ, վոմանք՝ վառարանի շուրջը, իսկ մի  
քանիսը հաստ արկղի վրա, վոր անհայտ ե, թե ին-  
չու յեր այդտեղ։ Ամենքից զեղանկար տեղավորվել  
եր մի թիկնեղ մարդ։ Նա չոքել եր և միենույն ժա-  
մանակ համարյա պառկել մեջքի վրա, այնպես վոր  
նրա գլուխը ցցված ծնկների հետ հավասար եր։

Յեվ ներկաները, վորոնք կոլոսողի ակտիվն եյին,  
նրա առաջատար ուժը, բոլորը՝ համարյա առանց  
բացառության խոսնում եյին խելացի ծանրությամբ։  
Ննջող չկար, ինչպես գյուղական այն ժողովներում,  
յերբ զեկուցողի միալար ձայնից կախվում եյին ուն-  
կրնդիրների հոգնած գլուխները, և արդեն մի ան-  
կյունից լսվում եր մրավի աղմուկ, կարծես այն  
կողմից զնում եր մի մենավոր սայլ և սայլը խուլ  
ճոնչում եր։ Պատասխանատվության զգացումի հետ,  
նրանց խոսքերի մեջ կար մի խստություն։ և յերբ  
լուսում եյին՝ այդ լուսությունն ևս վկայում եր, վոր  
մարդիկ կշուռում և կշուռադատում են։ Յեվ նույնիսկ  
«կես կոփվ» Միոն այլես յերկար չեր աղմկում, այլ  
բարձականանում եր ընդհատ բացականչություննե-  
րով, վոր թեպետ վորտաճայն եյին, բայց և այն-

պես խելացի ելին։ Իսկ քեռի Դավոն արդեն գրավել  
եր իր տեղը և լայն դանակով տաշում եր մի սեպ,  
տաշում եր և մտածում։

Հեշտ չի այն աշխատանքը, վորի համար նրանք  
ուղեղ ելին մաշում։ Զյունի բարակ շերտի տակ լուս  
քնել են այն դաշտերը, վորտեղ վաղը նրանք պիտի  
քրտինք թափեն։ Իսկ հարկավոր ե ավելի լավ կազ-  
մակերպել համայնական դաշտերի վարը, հարկավոր  
ե բարձր բերք ստանալ։ Հարյուրավոր հեկտար դաշ-  
տերի վրա աշխատելու յեն տարբեր մարդեկ, և ահա  
պետք ե այդ մարդկանց դասայնուրել այնպես, վոր  
ստացվի առավել արդյունք։ Կա բեխով Տիգրան, կա  
և Թիմարցի Տիգրան, կա Տիգրան, վոր անհայտ ե,  
թե ինչու կոչվում ե «Հայու տղա», վերջապես չոր-  
րորդ Տիգրանին կոչում են «կոմսոմոլ Տիկո», և ահա  
չկա ավելի լավ ջրվոր, քան բեխով Տիգրանը։ Թի-  
մարցուն չի կարելի քաղհանի ուղարկել, վորովհետեւ  
նա կովում ե քաղհանավոր կանանց հետ, այնինչ  
նրանից լավ Փուլդոն քշող չկա. «Հայու տղան» բամ-  
բակի «հոգու մեջն ե», իսկ կոմսոմոլ Տիկոն որնի-  
րուն մեքենաների հետ ե։ Կա տափի, բամբակի ա-  
րաթ, պետք ե վորոշել, թե վո՞ր պատանին ձեռնհաս  
ե հորիկ լինելու, քա՞նի տղամարդ կարող ե գետա-  
փի խոտանեղը հնձել, ո՞վ ե դարսում բարձր բար-  
դոց և այնքան ամուր, վոր նույնիսկ հարավի քամին  
չքանդի։ Սեղանի մոտ նստած մեկը, վոր դեկավա-  
րում ե խորհրդակցությունը, հարցնում ե.

— Քեռի Դավոն, յերկար արտի ներքեի մա՞սը  
պիտի թանձր սերմել, թե՞ վերեի։

Քեռի Դավոն մի քիչ մտածում ե և պատասխա-  
նում։ Յեկ դուքս ե դալիս, վոր վոչ վերմեր պի-

տի սերմել և վոչ ել ներքելը նոսր, այլ յերկու ծայ-  
րերը հավասար խտությամբ, իսկ մեջտեղը թանձր։

Յեկ դեռ հարյուրավոր այսպիսի հարցեր՝ բամ-  
բակ ցանողների, քաղհանավորների, սերմնացանե-  
րի և հնձլորների, դարբնի և սայլապանների մա-  
սին, աղյուս թափողների և տուն կառուցող վար-  
պետների աշխատանքի ու նրա վարձատրության չա-  
փի մասին և այն մասին, թե ինչպես սերմել, վոր  
արտերում անսերմ «խեց» չմնա, վոր հողի բոլոր  
գուղձերը վշշվեն։ ով ե քաղցր հնձում, ով ե լավ  
սոու քաշում, լար տալիս և մարգոց անում, յե՞րբ  
և հարկավոր ցելաջուր և յե՞րբ ակոսով ջուր, — և  
մի՞թե հնարավոր ե միասմի թվել աշխատանքի այն  
բոլոր տեսակները և նկարագրել աշխատանքի կադ-  
մակերպման գժվարությունները և նրանց փորձը,  
վորոնք չորս տարվա ընթացքում յեփել են այն  
գժվարությունների բովում և վորոնցից յուրաքան-  
չյուրը փակ աչքերով ել տեսնում ե իրենց հողերը,  
իրենց մեքենաներն ու մարդկանց, վորոնք միացրել  
են աշխատանքը։

Յեկ դեռ յերկար ժամանակ և վոչ թե մի որ,  
անձրեկից ծեծված և արեառ դեմքերով այդ փորձա-  
ռու մարդեկ, համայնական հողի մշակների այդ նոր  
ցեղը պիտի ուղեղ մաշի և նրանց աշխատանքը պիտի  
ուռանա լիքը հասկերով։

Յերբ ներս մտանք քեռի Դավոյի տունը, տնեցի-  
ների դեմքի վրա նկատեցինք մեր դալու հետ ընդ-  
հաված հետաքրքիր պատմության հետքերը։ իսկ  
քեռի Դավոն այնպես եր նատել և մյուսներն այնպիս-  
ի յին նայում նրան, վոր մատնում ելին, թե այդ հե-

տաքրքիր պատմողը հենց ինքը քեռի Դավոն եր, վուրի յերկու կողքին, թախտի վրա, քոթոթների նման կծկել ելին յերկու թուլս մանուկներ, ըստ յերեւոյթին քեռի Դավոյի թոռները։ Նրանցից մեկը դռսավական յերկար մնաց այդ դիրքով և նրա լայն չուծ աչքերից յերկում եր, վոր մանուկը դեռ պապի պատմածի ազգեցության տակ է։

Նրանց սենյակը շատ բանն եր ասում իր տիրոջ՝ քեռի Դավոյի նկարագրի մասին։ Նույնպես ամուր նստել ելին պատերը, ինչպես քեռի Դավոյի կաղմավածքն եր, և ամեն ինչից հայտնի յեր, վոր տերը տունը կառուցել ե խնամքով, ամեն ինչ իր տեղն եր և մտածված, ինչպես նրա խոսքերը, և դեռ շատ վաղուց, յերբ քեռի Դավոն անոթեան, թափառական եր, այդ դռան նախը յեղել ե նրա մտքում։

Տան կառուցվածքի կոշտությունը մեղմացրել եր կանացի մի ձեռք, վորը պատուհաններից կախել եր մաքուր վարադույրներ, պատերին նկարներ և դուշնըդույն թղթերից զարդեր։ Լիքն եր տան ներսը, դռան մոտ կախված եր մի փափուկ յերեսսրբիչ, իսկ վերեկց դաշտային չորագած ծաղիկների միջից նայում եր Բուդյոննին։ Այդ լիքը տան բոլոր իրերի և մարդկանց վրա կար ապահով կյանքի կնիքը, իսկ փայլուն սամավարը կարծես ավելի զարդ եր և նորափեսայի նման ուռած-իրքված նայում եր։

Յերկար կլինի պատմել մեր զրույցը, վոր սկսվեց ինչպես սկսվում ե պարզ զրույցը։ քեռի Դավոն հայտնեց, վոր հենց նույն որը նրա առաջարկով կունողի ակտիվի խորհրդակցությունը վորոշել ե կառուցել ձիերի նոր դոմ։

— Ել վո՞նց ես։

— Գոհությունն, — և հասու մատներով սեղանի վրա հավագում եր հացի փշրանքները։ Միշտ անհանդիստ են նրա ձեռքերը, միշտ ինչ վոր մի բան ե անում։ ահա հավաքեց հացի փշրանքները և սկսեց հարդարել սիրոցի խճճված ծոպերը։

Նա պատմում է այն, ինչ արդեն հայտնի յի, ինչ վոր վկայում են նրա տունը, տան իբրևը, տանեցիները, նրանց հագուստը, նրա թոռները, և վերջապես իր՝ քեռի Դավոյի անլրդով ու գոհ դեմքը, նրա զրույցի խաղաղ ընթացքը։

Պատահէ՞լ և ձեզ ձմռան բուքին լինել դրսում խավարի մէջ, յերբ ձյունախառն բուքը ծածկում է բոլոր ճանապարհները, ձյունի վաթիլները սուր տվազների նման ծեծում են ձեր գեմքը, սառչում և ձեր չունչը և ահա թվում ե, վոր այլևս փրկության ուղի չկա, փրկության ուղի՝ այդ խավար գիշերը, յերբ վոռնում ե բուքը։ և ահա հանկարծ ցոլում և մի վիթխարի կրակ։ զժվարությամբ հասնում եք կրակին, և յերբ արդեն տաքացել են ձեր ձեռքերն ու մարմինը, յերբ հնարավոր մահը զառնում ե անցյալ, իսկ փրկությունը՝ հրաշք, կրակի մոտ ուրիշներին հանդարա ծայնով պատմում եք այն ուղիների մասին, վորտեղ խավար եր և վոռնում եր մահվան բուքը։ Ահա այդպիս իրեւ մի մարդ, վոր հասնում է ապահովության ափը, քեռի Դավոն պատմեց իր և իր նմանների կյանքը։ Նրանք և նրանց պապերը այդպիսի տուն չեն ունեցել, նրանք ապրել են մի մությերկրում, մըստ տների թոնրածխի մեջ։ Նրանք ունելին յեղեղնյա խսիր, վոր փոռում ելին ոչախիր առաջ և ամբողջ դերդաստանը պառկում եր խսիրի վրա, ինչպես քարայրի զարանը չոր տերեւների վրա։

Յեկ նույնիսկ արք կյանքը շատ յեղավ նրանց համար, և ինչպես կրակվող յեղեղնուառից փախչող թռչուններ, նրանք հեռացան իրենց բարձր քարափների խեղճ տներից:

Յերեկից մի գրիչ կապամի քեռի Դավոյի կյանքը և այդ զրիչը շատ կդանի հերոսություններ նրա կյանքում: Յեկ նա կզարմանա, թե ի՞նչպես և, վոր բոլոր պատուհասների ընթացքում չի անհետացել քեռի Դավոյի զարմը: Բարձր վոգեռություն կհոսի նրա յերակներում, յերբ այդ պատմիչն իր պատմությունը հասցնի մինչև այն որը, յերբ իրար հետ միացան տասներկու ծուլի և այս հողերի վրա վառեցին նոր կյանքի կրակները և առաջին տասներկուսի հետ քեռի Դավոն լսեց համայնական կյանքի կոչը,

— Իսկ ի՞նչ ես անելու այն ավելցուկը, ովոր ունես...

Այստեղ մեր զբույցին խառնվեցին՝ և կանայք՝ քեռի Դավոյի կինը և նրա հարսը, այն թուխ մանուկների մայրը, վորի կանացի մատները քնքշություն եյին տվել Դավոյի կառուցած տան հաստ պատուհաններին և պատերին: Յերեաց, վոր կանայք տարբեր կարծիքի յեն ավելցուկ ցորենի և մյուս մթերքների ոգտագործման մասին. նրանք պահանջում եյին «կարի մեքենա» և «կոռավաթ», իսկ հարսը նույնիսկ պատեփոն: Այնինչ քեռի Դավոն հակառակ է մտածում. նա կամենում է իր նոր տան կողքին կառուցել մի ավելի ընդարձակ սենյակ, գետնից բարձր, վոր ներքեւ լինի մասան, իսկ կտուրի վրա ամառվա չարդախր: Յեկ յերբ պատրաստ կլինի այդ սենյակը, այն ժամանակ նա կցնի յերկաթյա մահ-

ճակալ: Նրա թոռները գլուխությունը փաթաթվեցին պապին, կարծես այդ յեղանակով հայտնեցին, վոր իրենք չեն ուզում վոչ խոր մասուն և վոչ յերկաթե մահանակալ, այլ միայն ուզում են, վոր միշտ ունենան այդպիսի պապ, բարձրանան նրա ուսերի վրա, գլորվեն նրա գողում և պապը նրանց դարձանալի պատմություններ պատմի:

Ճրագները վառվեցին:

Յերբ սեղանի արկղից հարսը լուցկի հանեց, իմ աչքին ընկավ ելեքտրոլարի կապոցը, կոճակները, դեղին պատրոնը և նույնիսկ մի ելեքտրոլամպ:

— Ինչո՞ւ յես հավաքել, քեռի Դավո:

— Հարա մեղ լուս կիտա Սիմիստրոն...

Սիմիստրոն, Յեմստրոյը, Յեմչինը...

Քեռի Դավոյի պատուհանից յերեսում եր հայկական հին գյուղին ոտարութի պերգամետ: Դիմացի բլուրների ստորոտում թարթում եյին բազմաթիվ ճրագներ, բլուրների վրա յերեսում եյին ավելի դրեն կրակներ: Թվում եր, թե ամբողջ դաշտում փուլի և կրակներ: Թվում եր, թե ամբողջ դաշտում փուլի և արդյունաբերական մի մեծ քաղաք և նրա բազմաթիվ կրակները վառվում են գիշերային մթության մեջ: Պատուհանից նայում եյի այդ հոյակապ տեսարանին, իսկ քեռի Դավոն պատմում եր, վոր գործարանի շաղախինք քիչ քրտինք չեն խառնել և իրենք, և ահա այդ վաստակի փոխարեն «Սիմիստրոն» նրանց լույս և խոստացել:

— Ե, բարով մնաս, քեռի Դավո:

— Բարով, բարով տեսանք:

Բարկից ավելի փառահեղ եր Յեմչինը: Քեռի Դավոյի տան պատուհանից յերեսում եյին միայն տների մի մասը և բլուրները, բայց չեր յերեսում վիթխարի մի մասը և բլուրները, բայց չեր յերեսում վիթխարի

ծխնելույղը, վորից թանձր ծուխը բարդ-բարդ բարձրանում եր: Լսլում եյին պայթյուններ և խուլ աղմուկ: յերեկ վաղոնետների մեջ լցնում եյին կրաքար:

Գյուղի նոր թաղուլ դառնում եյի տուն: Յերկու կողմը միանման և մաքուր տներ եյին և յուրաքանչյուր տան զույգ պատուհանից լույսի բարակ շերտ եր ընկել նոր փողոցի վրա: Յել ինչպես մի նետ, այդ փողոցը ձգվում եր դեպի յեղեղնուտը և Զույգ լուսը կարծես փողոցի ճայրն եր:

Մուգ մանիչակագույն շղարշ եր նստել լեռան լանջերին և նրանց ստորոտներն ընկդմկել եյին շղարշի խավար ծալքերում: Բայց այնքան սպիտակ եր լեռան գագաթը, վոր նույնիսկ այդ մութ շղարշի միջից ցողում եր նրա սպիտակությունը, ինչպես անարատ մարմինը թափանցիկ քողի միջից: Վոսկեղեն լուսինը, վոր արեկ նման եր, բայց առանց ճառադայիթների, — լուսինը գողգողալով իջնում եր խոր անդունդի վրա: Այն կողմերում հովիվները հրդեհել եյին յեղեղնուտը և թմռում եր, թե ծով ե բանկվել: Այրվող յեղեղնուտից բաղերը կանչելով պտտալում եյին իրենց կրակվող բների վրա: Քամին բարձրանում եր այրվող յեղեղնի և խավարի մեջ նրանք նման եյին հրաթե թռչունների: Լեռը բարձր եր բոլորից և նույնիսկ այդ հրդեհով ծովը չեր լուսավորում նրա խավար լանջերը:

Մի տնից լավեցին խուլ ձայներ. կարծես բաղմաթիվ կանայք միաժամանակ և խմբով ասացին նույն բանը: Պատուհանից յերմաց ոենյակի ներսը, վորը հիշեցնում եր քեռի Դավոյին տունը. միայն չկային յերեխաներ և տղամարդիկ: Ութբառասը գեղջկուհի-

ներ հասարակ սեղանի շուրջ բոլոր նստել եյին և յերբ Մարինան բարձրացնում եր ձեռքը, նրանք խըմբով ընթերցում եյին: Մեկը նույնիսկ մատը շարժում եր տողերի հետ, ինչպես դպրոցական յերեխա:

— Մեր կոմունան վար կանի...

Յեկ խուլ դղբղացին այդ բառերը, ինչպես բաղմության սրբազն յերդումը, յերբ ծովի նման ծփում ե այդ բազմությունը, նրանց քայլերից թընդում ե գետինը, հրդեհ ե բանկվել նրանց հոգիներում և հողմը կրակին ե մատնել հին յեղեղնուտները և տիղմը և թունավոր ճահիճը, հուրը խանձում ե ճահիճների զեռուներին, կրակի լեզվակները ճեղքում են դարավոր խավարը և կարիքից ազատագրված մարդը ճախրում ե վորպես հպարտ բաղեկ:

34.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Հյումբաթի ձոր	3
Տիգրանուհին	12
Յեղ բարբակը	19
Մարու	25
Մուրոյի «զբուց»-ը	32
Զորելի լույսը	40
Անձրես	49
Մի անդամ Հոկտեմբերի 25-ին	55
Քեռի Դավոն	66

«Ազգային գրադարան



NL0332092

23491

ԳԻՒԲ 1 ԱՊԵՐՎԻ  
ԿԱԶՄ 50 ԿՈԹԵԿ



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԻ  
ДОЖДЬ

Гиз ССР Армении, Эривань